

ԳԱՀԻՐԷ, 2 (ԱՅՓ). - Եգիպտոսի նախագահ Հիսսի Մուպարաբ Գա-
հիրէի մէջ հանդիպում ունեցաւ Միջին Արեւելքի խաղաղութեան հա-
մար ամերիկացի մասնաւոր պատուիրակ Ուիլիամ Պրնիպի հետ, քննար-
կելու համար պաղեստինեան շրջաններու եւ Իրաքի վերջին իրադար-
ձութիւնները:

Մուպարաբի մօտիկ աղբիւրներ հաղորդեցին, որ նախագահը եւ
Պրնիպ քննարկեցին նաեւ խաղաղութեան ճամբու քարտէսը գործադ-
րութեան դնելու ճիգերը, ինչպէս նաեւ պալմարաբեկ խոչընդոտուե-
րը չէպէտքայնու միջոցառումները:

Պրնիպ իր կարգին Մուպարաբի վեկուցած է պաղեստինցի վարչա-
պետ Ահմէտ Բորէյի հետ ունեցած հանդիպումին մասին:

ԼԻԲԱՆԱՆ - ՍՈՒՏԱՆ
ՀԱՄԱՉԱՅՆԱԳԻՐԸ ԿՆՔՈՒԵՑԱԻ

ՊԵՐՐԻ ԱՒԱՐՏԵՑ ԽԱՐԹՈՒՄ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ

Խորհրդարանի նախագահ Նեպիհ Պրրի երէկ աւար-
տեց Սուտան պաշտօնակաւ այցելութիւնը, Սուտանի
խորհրդարանին հետ կնքելով միացեալ համաձայնա-
գիր մը: Համաձայնագիրը ստորագրեցին Պրրի եւ սու-
տանցի իր պաշտօնակիցը՝ Ահմէտ Իպրահիմ Թահէր:

Համաձայնագիրը ստորագրութենէն ետք Պրրի եւ
Թահէր տուին մամուլ միացեալ ասուլիս մը: Թահէր
գրուածեց Պրրիի կատարած այցելութիւնը եւ անոր
կարեւորութիւնը Պէյրութ - Խարթում երկկողմանի յա-
րաբերութեանը բարելաման եւ ամրապնդման մէջ:

Պրրի շեշտեց, որ արաբական միացեալ խորհրդա-
րան մը ստեղծելու ծրագիրը լուրջ է եւ արդէն իսկ
Սուտանի խորհրդարանը սկզբունքային հաւանութիւն
տուած է այդ առնչութեամբ:

Պրրի հաւաստեց, որ լիբանանեան դիմադրութեան
պատճառը իսրայէլեան բռնազրաւումն էր, իսկ Հըզ-
պալլա լիբանանեան կուսակցութիւն մըն է, որ իր պար-
տականութիւնը լրիւ կատարած է: Իսկ լիբանանցի ժո-
ղովուրդը կը զօրակցի եւ նեցուկ կը կանգնի ազգային
դիմադրութեան:

Պրրի նկատեց սուտանեան, որ Իսրայէլ պիտի չկա-
րենայ «թուղթերով» տիրել Պաղեստինին, հետեւաբար
պաղեստինցի ժողովուրդին իրաւունքները չեն վերա-
դառնար բացի դիմադրութեամբ, ինչ որ յստակ երե-
ւոյթ դարձած է Օսլոյի համաձայնագիրին ընթացքին:
Ան աւելցուց, որ այսօրեան տագնապը հետեւանք է
սեղանին տակ կնքուած այս համաձայնագիրին, որ ան-
գամ մը եւս կրկնուեցաւ երէկ՝ Ժրնեի մէջ:

Մամուլ միացեալ ասուլիսէն ետք հրապարակուեցաւ
նաեւ պաշտօնակաւ հաղորդագրութիւն մը, որ խափա-
րատապարտեց ամերիկեան Բոնկրէտի կողմէ վաւե-
րացուած Սուրիան հաշուետուութեան կանչելու օրի-
նագիծը եւ շեշտեց Լիբանանի իրաւունքը՝ տիրանալու
իր բռնազրաւած բոլոր հողերուն:

Պրրի երէկ յետմիջօրէին վերադարձաւ Պէյրութ:

ԱՄՍԱԼԼԱ Բ. ԹԱԳԱՒՈՐ ԼՈՆՏՈՆԵՆ ՄԵԿՆԵՑԱՒ ՈՒԱՇԻՆԿԹԸՆ



ՊԼԵՐ Կ'ԵՆԴՐՈՒՄԻ ԱՎՈՒՄԱՆ Բ.Չ

ԱՄՍԱԼԼ, 2 (ԱՅՓ). - Յորդանանի Ապտալա Բ. Թա-
գաւոր երեքշաբթի օր (երէկ) Միացեալ Նահանգներ մեկ-
նեցաւ՝ Սպիտակ Տան ներկայացնելու համար Իսրայէլի
հետ բանակցութիւններուն վերսկսելու պաղեստինեան
կարգ մը առաջարկները, յայտնեցին յորդանանցի պաշ-
տօնատարները:

Ապտալա Բ. Լոնտոնի մէջ կարճ դադարի մը ընթաց-
քին տեսակցութիւն մը ունեցաւ վարչապետ Թոնի Պլէ-
րի հետ, որմէ ետք շարունակեց ճամբան: Ան Հինգշաբ-
թի օր (վաղը) Սպիտակ Տան մէջ տեսակցութիւն պիտի
ունենայ նախագահ Ճորժ Պուշի հետ: Անոր մէջ բանը-
րը շեշտեց, որ այս անգամուտան այցելութեան առանցքը
պիտի կազմէ Միջին Արեւելքի խաղաղութեան գործըն-
թացն ու խաղաղութեան ճամբու քարտէսին գործադ-
րութիւնը:

Յորդանանի դահակալին կ'ընկերակցին արտաքին
գործոց նախարար Մարուան Մուալիտ եւ գաղտնի սպա-
արկութեանց պետ Սաատ Խէյր:

ԺԼՆԵՒԻ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԿԸ ԽԱՆԴԱՎԱՌԷ ՈՐՈՇ ԿՈՂՄԵՐ, ՀԱԿԱՌԱԿ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԹԷԼ ԱՒԻԻԻ ԿԱՄՔԻՆ

Միջին Արեւելքի խա-
ղաղութեան նոր ծրագի-
րին զօրավիգ կանգնողնե-
րը՝ խանդավառ ժրնեի
մէջ ծրագիրն պաշտօն-
անկաւ հրապարակուեցն,
կը պատրաստուին իրենց
արշարձարուակելու Ուա-
շինկթընի մէջ, մինչ Իսրա-
յէլ կը զգուշացնէր Միաց-
եալ Նահանգներու ար-
տաքին գործոց նախա-
րար Բոնի Փաուլը ինչ-
դիպում ունենալ ծրագի-
րը մշակող պատասխա-
նատուներուն հետ:

Իսրայէլի խորհրդա-
րանին նախկին նախա-
գահ Արախաւ Պրրի, որ
Երկուշաբթի օր ներկայ
եղած էր ժրնեի նախա-
ձեռնութեան յայտարա-
րութեան, ըսաւ, որ ծրա-
գիրը մշակող գլխաւոր
պատասխանատուները
Եոսի Պէյրութ եւ Եասէր
Ապտ Ռապպո հաւանա-
բար այս շաբթուան ըն-
թացքին, Ուաշինկթընի
մէջ հանդիպում պիտի ու-
նենան Փաուլըի հետ:
Պրրի ըսաւ նաեւ, որ ամե-
րիկացիները հաւանու-
թիւն տուած են այսպիսի
հանդիպումի մը մասին,
սակայն ճշգրիտ թուակա-
նը տակաւին չէ որոշուած:

Միացեալ Նահանգնե-
րու արտաքին գործոց նա-
խարարութեան բարձրագ-
ու Ռիչըրտ Պաուլը Երկու-
շաբթի օր յայտնած էր, որ
Փաուլը հաւանաբար
հանդիպում ունենայ Պէյ-
րութի եւ Ապտ Ռապպոյի
հետ: Իսրայէլի առեւտու-
րի նախարար Էհուտ Էլ-
մէրթ սակայն պիտի
ստուաւ, որ նման հանդի-
պում մը «սխալ է ոչ ճիշդ
որոշում մը» պիտի ըլլայ
ամերիկացի բարձրաս-
տիճան պաշտօնատարի
մը կողմէ: Օլմէրթ աւել-
ցուց, որ պիտան է Փաուլը-
լի Իսրայէլի հանդէպ բա-
րեկամութեան, բայց ե-
ւայնպէս խաղաղութեան
նախաձեռնութեան հան-
դէպ անոր դատողութիւնը
կրնայ կասկածի տակ
առնուիլ:

Անցեալ շաբթուան մէջ,
Փաուլը դրական արտա-
յայտութիւն ունեցած էր
խաղաղութեան նոր ծրա-
գիրին մասին, որուն հան-
դէպ սակայն պաշտօնա-
պէս զօրակցութիւն չէր
յայտնած: Փաուլը ըսած
էր, որ խաղաղութեան
ճամբու քարտէսին նման
այլ ողջունելի է ժրնեի
նախաձեռնութիւնը:

Վարչապետ Արիէ Եա-
րոն եւ անոր կառավարու-
թիւնը անտեսած ու անի-
մաստ նկատած են ծրա-
գիրը, պահանջելով որ
ճամբու քարտէսը գոր-
ծադրութեան դրուի:

Միւս կողմէ, Պէյրութի
Ապտ Ռապպո երէկ կոչ
ուղղեցին Միացեալ Նա-
հանգներուն, վերստին
գործօն դերակատարու-
թիւն ստանձնելու խաղա-
ղութեան գործընթացին
մէջ: Անոնք պահանջեցին
նաեւ, որ Ուաշինկթընը զօ-
րավիգ կանգնի իրենց նա-
խաձեռնութեան եւ անոր
թիրախներուն, որոնք կը
նպատակադրեն լուծել
պաղեստինիսրայէլեան
տագնապը: Պէյրութի եւ
Ապտ Ռապպո ողջունելի
գտան Փաուլըի յայտա-

րարած զօրակցութիւնը,
սակայն պահանջեցին, որ
ամերիկեան այլ ձայներ
ալ բարձրանան:

Իսրայէլեան մամուլը
գաղջ եւ նոյնիսկ ճաղա-
կան հակադարձութիւն մը
ունեցաւ ժրնեի խաղա-
ղութեան ծրագիրի հան-
դէպ: «Մարտի» կը գրէր,
որ ժրնեի հաւաքը բաւա-
կան տպաւորիչ էր, այն-
քան մը որ եթէ այլ մոլո-
րակէ մը մէկը հոն հասնէր
եւ տեսնէր աւելի քան 7
հարիւր ներկայները, պի-
տի հաւատար, որ իսկա-
պէս խաղաղութեան հա-
մաձայնագիր մը ստո-
րագրուած է վարչապետ-
ներուն խաղաղութեան
Ապտ Ռապպոն:

Այլ օրաթերթեր ալ
անդրադարձան հաւաքին
ու հանդիսութեան, ընդգը-
ծելով, որ պաշտօնակաւ
յայտարարութիւնները
չեն համապատասխանե-
ր գետնի վրայ տիրող կա-
ցութեան եւ իրականու-
թեան: Իսկ «Ճերուզալէմ
Փոսթ» խիստ ոճով քննա-
դատեց Պէյրութը, դիտել
տալով, որ արդարութեան
նախկին նախարարը, որ
չէր յաջողած արտ մը
պայահովել խորհրդարա-
նին մէջ, իրատուք չունի
մասնակցելու «խաղաղու-
թեան խեղկատակու-
թեան» մը:

ՉԻՆԵԱԼ. պաղես-
տինցի մը սպանուեցաւ
երէկ Ժրնեի մէջ, որ ներ-
խուծած էին իսրայէլեան
ուժեր, յայտնեցին պա-
ղեստինեան ապահովու-
թեան աղբիւրները: Ամժառ
Սատի անդամ էր «Արա-

ՀՈԿՏԵՄԲԵՐ 27Ի ՀԱՐՅՈՎ

ՆԱՅԻՐԻ ՅՈՒՆԱՆԵԱՆ ԵՒ ԸԻՆԳ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ ՑՄԱԸ ԲԱՆՏԱՐԿՈՒԹԵԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՈՒԵՑԱՆ

Երէկ հրապարակուեցաւ «Հոկտեմբեր 27»ի գատավարութեան վճիռը:
Երեւանի Կեդրոն եւ Նորք - Մարաշ Համայնքներու առաջին ատենի գատարանին
կողմէ քրէական օրէնսգիրքի ծանրագոյն պատիժին՝ ցմահ բանտարկութեան դա-
տապարտուեցան Նայիրի Յունանեան, Կարէն Յունանեան, Վառաժ Գալստեան, Դերե-
նիկ Բեշնեան, Էտիկ Գրիգորեան եւ Աշոտ Կնեազեան: «Հոկտեմբեր 27»ի գծով
վերջին ամբաստանալը՝ Համլէթ Ստեփանեան դատապարտուեցաւ 14 տարուան
բանտարկութեան:

Ամբաստանելները յանցաւոր նկատուեցան Հայաստանի քրէական օրէնսգիրքի
վեց յօդուածներով՝ պետական իշխանութիւնը կորզել փորձելու, պետական գործիչ
սպաննելու, անոր գործունէութիւնը դադարեցնելու համար, պետական գործիչ սպա-
նութեան փորձ կատարելու, ահաբեկչութեան, մարդոց ազատութիւնը խափանելու
եւ ապօրինի զէնք կրելու յանցանքներով:

Նշեք, որ մեղադրող կողմը ցմահ բանտարկութիւն պահանջած էր միայն ամբաս-
տանելներու համար, որոնք մուտք գործած էին Ազգային Ժողովի շէնքը:

Հոկտեմբեր 27ի ոճիւրի գոհ գացած էին Հայաստանի Ազգային Ժողովի նախագահ
Կարէն Դեմիրճեան, վարչապետ Վազգէն Սարգսեան, Ազգային Ժողովի փոխ նախա-
գահներ Եւրի Բաշխեան եւ Ռուբէն Միրզոբեան, պատգամաւորներ Հենրիկ Աբրա-
համեան, Միքայէլ Քոթանեան, Արմենակ Արմենակեան եւ նախարար Լէոնարտ Պետ-
րոսեան:

Դատավարութիւնը սկսած էր 15 Փետրուար 2001ին եւ ցարդ ունեցած էր 297 նիստ:

ՄԱՍԹՐԻԽԹԻ ՄԵՃ ԿԱՅԱՅՈՂ ԵՎԿԻ ՆԱԽԱՐԱՐԱՅ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՆԻՍՏԻՆ

ՆԱԽԱՐԱՐ ՕՍԿԱՆԵԱՆ ԿՈՒԼԻԵԻԸ ՄՏԱԽՕՍ Կ'ՈՐԱԿԷ

Մասթրիխտի մէջ երէկ իր աշխատանքները աւարտեց ԵՎԿԻ Նախա-
րարներու Խորհուրդի հերթական նիստը, որուն ընթացքին Արաբիան
արտաքին գործոց նախարար Վիլյամ Կուլիեի Էյոյթէն Էոք խօսք առաւ
Հայաստանի արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեան եւ Կու-
լիեի ստախիւս որակեց:

Օսկանեան ներողութիւն խնդրելով իր գործածելիք չէր դիմադրու-
կան բառափոխումի համար, յայտարարեց, որ նախանցեալ օր ԵՎԿԻ
ներկայացուցիչներու եւ Միւնխի խմբակի նախագահներու մասնակցու-
թեամբ երկու երկիրներու նախարարներուն միջեւ համաձայնութիւն գո-
յացած էր Նախարարներու Խորհուրդի եւրափակիչ յայտարարութեան
Լեոնային Ղարաբաղի բաժնին շուրջ, ինչ որ դրժուեցաւ Կուլիեի կող-
մէ՝ վեհաժողովի լիազօրման նիստին ընթացքին:

Կուլիե իր խօսքին մէջ նշած էր, թէ կարելի եղած չէր Լեոնային Ղարա-
բաղի վերաբերող բաժնին շուրջ համաձայնութեան յանգիլ:

Նախարար Օսկանեան իր Էյոյթէն մէջ անդրադարձած է վրաստանի
վիճակին եւ Լեոնային Ղարաբաղի տագնապին:

Ան նշած է, թէ Հայաստան շահագրգռուած է վրաստանի մէջ կայունու-
թեան հաստատումը: Յայտնելով, որ վրաստանի մէջ կ'ապրին մօտ կէս
միլիոն հայեր, Օսկանեան դիտել տուաւ, որ Երեւան պատրաստ է գոր-
ծակցելու վրացական որեւէ կառավարութեան հետ, որ կ'արտայայտէ
վրացի ժողովուրդին ձգտումները:

Անդրադառնալով Լեոնային Ղարաբաղի տագնապին, Օսկանեան յոյս
յայտնեց, որ մինչեւ պիտի լինի 10րդ տարեդարձը կարելի կ'ըլլայ հասնիլ
տագնապի լուծման: «Մինչ Լեոնային Ղարաբաղի անլուծ տագնապը
յաճախ կը ներկայացուի իբրեւ շրջանային անկայունութեան գործօն,
ինքը՝ Լեոնային Ղարաբաղը կայուն, կայացած միաւոր է, որ կրնայ իր
ներդրումը ունենալ խաղաղութեան հաստատման մէջ: 2004ի աշնան
մէջ պիտի նշենք աշխարհի ամէնէն երկարատեւ եւ այսօր միակ իրա-
կան պիտարուի 10ամեակը: Այս յաջողութիւնը ունի երկու պատճառ:
Առաջին՝ այն հաւասարակշռութիւնը, որ հաստատուեցաւ եւ ճանչցուե-
ցաւ, երկրորդ՝ կողմերու քաղաքական կամքը՝ արիւնահեղութենէ խու-
սափելու»:

ՄԱՐՏԵԻ ՄԵՃ «1915 ԱՊՐԻԼ 24» ՓՈՂՈՑԻ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԱՆՈՒԱՆՈՒՄ

Մինչ Բանատայի մեծագոյն նահանգին՝ Քրանսա-
խօս Բեպէլի խորհրդարանը եւ Բանատայի Բազմամը-
շակութեան խորհուրդը պաշտօնապէս կը ճանչնան ին-
չակական Յեղասպանութիւնը՝ անցնող քանի մը օրե-
րուն, Յրանսայի Սարսէլ քաղաքին մէջ Նոյեմբեր 29ին
տեղի ունեցած է «1915 Ապրիլ 24»ի փողոց անուանա-
կոչման հանդիսաւոր արարողութիւնը, մասնակցու-
թեամբ Յրանսայի մէջ Հայաստանի դեսպան Էդուարդ
Նալպանտեանի եւ Սարսէլի քաղաքապետ Յրանսու-
Փուփոնի: Փողոցին անուանակոչումը իրականացած է
Մարսէլի քաղաքապետական խորհուրդի որոշումով:
Միաժամանակ տեղի ունեցած է նոյն գետնուրէն Հայ-
կական Յեղասպանութեան զոհերու յուշակոթողի բա-
ցումը:

Դեսպան Նալպանտեան իր խօսքին մէջ հաստատած
է, թէ Սարսէլի փողոցներէն մէկուն «1915 Ապրիլ 24»
անուանումը կ'ապացուցէ, թէ «Յրանսայի կողմէ Հայ-
կական Յեղասպանութեան իրականութիւնը ընդունու-
մը ամբողջ ֆրանսացի ժողովուրդին կամքին դրսեւո-
րումն էր»: Ան նաեւ դիտել տուած է, թէ Յրանսայի
մէջ ընդունուած քրէական եւ քաղաքացիական օրէնք-
ները կ'արտօնեն պատասխանատուութեան կանչել
Հայկական Յեղասպանութեան իրողութիւնը ժխտել
փորձողները: Դեսպան Նալպանտեան տեղեկացուց, որ
Յրանսայի կրթութեան նախարար յայտարարած է,
թէ Հայկական Յեղասպանութեան ուսումնասիրու-
թիւնը կրնայ ընդգրկուիլ Քրանսական դպրոցական
ծրագիրներուն մէջ:

ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ՝ ՀԱՅԱՁԳԻ ԹԵԿՆԱԾՈՒ

Վրաստանի Կեդրոնական Ընտրական Յանձ-
նաժողովին համաձայն, Յունուար 4ին կայա-
նայիք նախագահական ընտրութիւններուն
թեկնածու ներկայացած է թիֆլիսաբնակ Եւրի
Մկրտումեան:

Վրաստանի Հայերու Միութեան փոխնախա-
գահ, Վրաստանի խորհրդարանի նախկին պատ-
գամաւոր Վան Բալբուրդեանի համաձայն,
Մկրտումեան կը վերջի միայն հասարակական
գործունէութեամբ:

Միւս կողմէ, Բալբուրդեան նաեւ յայտնած է,
թէ Վրաստանի նախկին նախագահ Էտուարտ
Շէւարտաձէի «Յանուն Նոր Վրաստանի»
խորհրդարանական խմբակցութենէն դուրս
եկած է, իբրեւ բողոք՝ խմբակցութեան ղեկավար,
32ամեայ Իրաքիի Գոգասանի նախանցեալ օր-
ւան այն յայտարարութեան, թէ Վրաստանի մէջ
իշխանափոխութեան պատճառը ամերիկահա-
յերն են, որոնք, ըստ Գոգասանի, նիւթական
օժանդակութիւն տրամադրած են Պուրճանաձէ
- Ժվանիս - Սահակաշվիլի ետեակին: Նշելով,
որ ընդդիմադիր ուժերը կը փորձեն օգտագոր-
ծել հայերը մեղադրելու խաղաքարտը եւ կը
ձգտին կատարուած որակել հայկական յեղա-
փոխութիւն, Բալբուրդեան շեշտեց, որ «վրացի
ժողովուրդը չի հաւատար այս սուտին»:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԼՕՍԻ Շրջանային Վարչութիւնը փոքրուլային այցելութիւն մը տուաւ Երեւանի, 2 Դեկտեմբեր 2003ի առաւօտեան ժամը 11:00ին, նախագահական պալատ, Բանրապետութեան Ա. Տիկնոջ Անտրոն Էմիլ Լահուտի, զինք հրաւիրելու համար 20 Մարտ 2004ին ԼՕՍԻ 75ամեակի հանդիսութեանը բացումին հովանաւորութիւնը առաջարկելու:

ԼՕՍԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՖՐԵՆՏԻԷ ՆԱԽԱԳԱՀ ԼԱՀՈՒՏԻ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼԸ ԼԱՒԱԳՈՅՆ ԼՈՒԾՈՒՄԸ ԿԸ ՆԿԱՏԷ

Մարտինեան Նասրալլա Սֆէյր պատրիարքը երէկ Պեքրէի մէջ ընդունեց առողջապահութեան նախարար Սէյրման Ֆրենտիէն, որուն հետ քննարկեց Լիբանանը եւ շրջանը յուզող ընդհանուր հարցեր:

Կէս ժամուան հանդիպումէն ետք Ֆրենտիէ յայտնեց, որ քննարկումի առարկայ դարձած են շրջանային եւ ներկրանանեան իրադարձութիւնները, յատկապէս նախագահական ընտրապայքարին առնչութեամբ արձանագրուած զարգացումները:

Ֆրենտիէ շեշտեց, որ ինք կը գտնուի նախագահ զօր. էմիլ Լահուտի մօտիկ քաղաքական խրամատին մէջ:

Ֆրենտիէ ընդգծեց նաեւ, որ իր քաղաքական ուղեգիծին համաձայն, լաւագոյն լուծումը նախագահ Լահուտի նստաշրջանը երկարաձգելուն մէջ կը կայանայ եւ նշեց, որ Սուրիա Լիբանանի նախագահական ընտրապայքարին նկատմամբ վերջնական ոչ մէկ որոշումի յանգած է:

Ֆրենտիէ վարչապետ Ռաֆիք Հարիրիին պատասխանատու նկատեց երկրին մէջ ներկայիս տիրող տնտեսական իրավիճակին եւ անդրադառնալով կառավարութեան փոփոխութեան հաւանութեան ընդգծեց, որ եթէ յառաջիկայ կառավարութիւնը ըլլայ քաղաքական կառավարութիւն մը, պիտի մասնակցի անոր, իսկ եթէ ըլլայ յայտնի կոչուած «սովորական կառավարութիւն», հետո պիտի մնայ անկէ:

Ֆրենտիէ ակնարկելով նախագահ Լահուտի եւ վարչապետ Ռաֆիք Հարիրիի միջեւ ցրտացած յարաբերութիւններուն յայտնեց, որ ինք ոչ մէկ առնչութիւն ունի անոնց հետ, դիտել տալով սակայն, թէ անոնք կը վնասեն ամբողջ երկրին: Ֆրենտիէ ակնարկեց, որ ճիշդ է, թէ ինք անձնական մտերմութեամբ աւելի մօտ է վարչապետ Հարիրիի, սակայն ընդգծեց, որ քաղաքականութեամբ ինք նախագահ Լահուտի կողքին է:

ՄԱՀԱԶԴ

Տէր եւ տիկին Արթիւր Կիւլպէնկի եւ զաւակունք Տէր եւ տիկին Գէորգ Տէր Յակոբեան եւ զաւակունք Կիւլպէնկի Սուրբ Կիւլպէնկի Կիւլպէնկի ընտանիք Հատար ընտանիք Թոմաս ընտանիք եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց հօր եւ հարազատին՝

ՍՈՒՐԵՆ ԿԻՒԼՊԵՆԿԻ ԿԻՒԼՊԵՆԿԻ

մահը, որ պատահեցաւ Կիրակի, 30 Դեկտեմբերին: Յուղարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի վաղը՝ Հինգշաբթի, 4 Դեկտեմբեր, կէսօրու ժամը 12:00ին, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Չըրչի Երկրային գերեզմանատունը:

ՄԱՀԱԶԴ

Տիկին Լուսին Շիշոյեան եւ զաւակը՝ Կարպիս Տէր եւ տիկին Շահէ Շիշոյեան Տէր եւ տիկին Փաք Շիշոյեան Տէր եւ տիկին Յակոբ Շիշոյեան Տէր եւ տիկին Ներսէս Շիշոյեան Տէր եւ տիկին Վարդգէս Շիշոյեան Տէր եւ տիկին Գրիգոր Գարրիշեան եւ զաւակունք Տէր եւ տիկին Սարգիս Ոսկերիշեան Տէր եւ տիկին Գրիգոր եւ Սիրուն Ղազարեան Տիկին Մարի Շիշոյեան Տէր եւ տիկին Վազգէն եւ Թամար Սիմոնեան Տէր եւ տիկին Վրէժ եւ Արշօ Ղազարեան Տիկին Ովսաննա Եագուպեան Տիկին Ալիս Սիմոնեան Տէր եւ տիկին Ճորճ եւ Ռոզին Պարսումեան Տէր եւ տիկին Յովսէփ Աշեան եւ ընտանիք եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, եղբոր, մեծ հօր եւ հարազատին՝

ԼԵՒՈՆ ՇԻՇՈՅԵԱՆԻ (Ծնեալ՝ Նալեպ, 1928ին)

անակնկալ մահը, որ պատահեցաւ Երեւանի, 2 Դեկտեմբեր 2003ին, առաւօտեան: Յուղարկաւորութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Չորեքշաբթի, 3 Դեկտեմբեր, կէսօրէ ետք ժամը 3:00ին, Նոր Ատանայի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Պուրճ Համուտի Ազգային գերեզմանատունը:

●Ներկայս ընդունիլ իբրեւ մահազո: ●Ցաւակցութիւնները կ'ընդունուին հանգուցեալին բնակարանը, Հանքաշ փողոց, դեղարան «Նուրի»ի շէնք, 7րդ յարկ, Չորեքշաբթի 3, Հինգշաբթի 4 եւ Ուրբաթ 5 Դեկտեմբերին, երեկոյեան ժամը 6:00էն 9:00: Հեռ. 01-899448:

ԱՊԱՇՏՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՈՒՐԴԻ ԺՈՂՈՎ



Ապահովութեան Կեդրոնական Խորհուրդը երէկ յետմիջօրէին, նախագահութեամբ ներքին գործոց եւ քաղաքացիական պաշտպանութեան պարտաւար Էլիաս Մըրի, գումարեց ժողով մը, որուն ներկայ գտնուեցան ընդհանուր դատախազ Ատան Ատուն, Պէյրութի նախագահ Եսազույ Սարրաֆ, ներքին ապահովութեան ուժերու ընդհանուր տնօրէն Կարէն Մարտիան, Սարտիան Չէյնի, բանակի սպայակոյտի փոխ իրաւանատար Կարէն Չախիւ, բանակի գաղտնի սպասարկութեան տնօրէն Կարէն Սեւին, Ապար եւ ներքին ապահովութեան կեդրոնական խորհուրդի ընդհանուր քարտուղար Կարէն Էլիաս Խուրի:

ԼԻԲԱՆԱՆԻ ԸՆԴՈՒՄԵՏՈՒԹԻՒՆ ՆԵՐԵՆ ԳՈՐԾՈՅ ԵՒ ԸՆԴՈՒՄԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՊՈՒՐՃ ՀԱՍՈՒՏԻ ԸՆԴՈՒՄԵՏՈՒԹԻՒՆ

ԵՐԿՐՈՐԴ ԱՆԳԱՄ ԸԼԼԱԼՈՎ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ՝ ՓՎԿ ՆԱՍԿԱՏՈՒՓՈՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԱՃՈՒՐԳԻ ՄԻՋՈՅՈՎ ՊՈՒՐՃ ՀԱՍՈՒՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՍՊԱՆԴԱՆՈՅԻՆ ՅԱՆՁՆԱԶՄԱՆ ՀԱՄԱՐ

Պուրճ Համուտի քաղաքացիութիւնը կը կայացնէ փակ նամակատուփով հանրային աճուրդ իրեն պատկանող սպանդանոցին մէջ մորթուող անասուններուն յանձնարման համար: Այս աճուրդը տեղի պիտի ունենայ Երեւանի, 23 Դեկտեմբեր 2003ի կէսօրու ժամը 12:00ին:

Դիմումները կը ներկայացուին փակ նամակատուփով՝ համաձայն այս նամակով պատրաստուած պայմաններու տեսակով տրամադրութիւններուն, որոնց կարելի է ծանօթանալ եւ այդ տեսակներուն ձեռք ձգել քաղաքացիութեան կարգապահ հարցերու գրասենեակէն՝ աշխատանքի պաշտօնական ժամերուն ընթացքին, 150 հազար լիբանանացի ոսկիի հասնող գումարի մը դիմաց:

Մասնակցի փափաքողները պետք է իրենց դիմումները ներկայացնեն վարչական հարցերու գրասենեակին կամ զայն ուղարկել ապահով փոստով՝ ստանալու յատուկ դրութեամբ, Երկուշաբթի, 22 Դեկտեմբեր 2003ի կէսօրու ժամը 12:00էն առաջ:

ՃԱՆՈՒԹՈՒԹԻՒՆ Այս յայտարարութեան հրատարակութեան տնտեսութիւնը պետք է 15 օրէն պակաս ըլլայ: Յայտարարութեան հրատարակման թուական. 28 Նոյեմբեր 2003: ՊՈՒՐՃ ՀԱՍՈՒՏԻ ԸՆԴՈՒՄԵՏՈՒԹԻՒՆ ԱՆԴՈՒՄԵՏՈՒԹԻՒՆ

«ԱԶԳԱԿ»Ի ՖՈՆՏԻՆ

●Մարի Նարկիզեանի մահուան առիթով, Կիրակոս Նեմճեան 25,000 Լ. ո.

ՍՈՒՐԵՆ ԵՒ ՏԻԿԻՆ ԱՐԹՈՒՐ ԿԻՒԼՊԵՆԿԻ ԵՒ ՏԻԿԻՆ ՓԱՔ ՇԻՇՈՅԵԱՆ ՏԻԿԻՆ ՆԵՐՍԷՍ ՇԻՇՈՅԵԱՆ ՏԻԿԻՆ ՎԱՐԴԳԵՍ ՇԻՇՈՅԵԱՆ ՏԻԿԻՆ ԳՐԻԳՈՐ ԳԱՐՐԻՇԵԱՆ ԵՒ ՏԻԿԻՆ ՍԱՐԳԻՍ ՈՍԿԵՐԻՇԵԱՆ ՏԻԿԻՆ ԳՐԻԳՈՐ ԵՒ ՍԻՐՈՆ ՂԱԶԱՐԵԱՆ ՏԻԿԻՆ ՄԱՐԻ ՇԻՇՈՅԵԱՆ ՏԻԿԻՆ ՎԱԶԳԵՆ ԵՒ ԹԱՄԱՐ ՍԻՄՈՆԵԱՆ ՏԻԿԻՆ ՎՐԷՅ ԵՒ ԱՐՇՅՈ ՂԱԶԱՐԵԱՆ ՏԻԿԻՆ ՈՎՍԱՆՆԱ ԵԱԳՈՎԱՅԵԱՆ ՏԻԿԻՆ ԱԼԻՍ ՍԻՄՈՆԵԱՆ ՏԻԿԻՆ ՃՈՐՃ ԵՒ ՌՈԶԻՆ ՊԱՐՏՈՒՄԵԱՆ ՏԻԿԻՆ ՅՈՎՍԵՓ ԱՇԵԱՆ ԵՒ ԸՆՏԱՆԻՔ ԵՒ ՀԱՄԱՅՆ ԱԶԳԱԿԱՆՆԵՐ ԿՐ ԳՈՒՇԵՆ ԻՐԵՆԿ ԵՒ ԿԱՐԱԶԱՏԻՆ՝

ՍՈՒՐԵՆ ԵՒ ՏԻԿԻՆ ՅԱԿՈԲ ԵՒ ՏԻԿԻՆ ՓԱՔ ՇԻՇՈՅԵԱՆ ՔԱՅԻՍԱՆՈՐՈՒՄ ԵՆ ԱՆՉԻՆԵԿ ՄԱՆԿ զԱՎԱԿՈՎ ՄՐ՝ ԷՏՈՒԻՆ 30 Նոյեմբեր 2003 Պէյրութ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ «Ն. ԱՂԱԼԵԱՆ» ՄԱՍՆԱՃԻՂ ԳԱՒԱՌԱԿԱՆ ՊԱՐԵՐՈՒԹ ԴԱՍԸՆԹԱՅՔ Սկսեալ Ուրբաթ, 5 Դեկտեմբերէն, երեկոյեան ժամը 7:30ին, «Աղբալեան. Ե. Ս. Ը. Մ.» Մարգարայնի համալիրին մէջ: ԾԱՆՈՅԹ. Արձանագրութեան համար կարելի է դիմել հեռ. 03- 205325 եւ 03- 783882: ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Ը. Յ. Դ. ԶԱԲԱՐԵԱՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄՈՒԹԻՒՆ ԶԱՇԿԵՐՈՅԹ-ՊԱՐԱՇԱՆԴԵՍ Մասնակցութեամբ՝ «ԿՈՄԻՏԱՍ» ՆՈՒԱԳԱՆՈՒՄԻՒՄԻՆ ԵՒ ԵՐԳԻՉ ՅՈՎԱՏԵՓ Եղի կ'ուսնայ Չորեքշաբթի, 24 Դեկտեմբեր 2003, երեկոյեան ժամը 9:00էն սկսեալ, «ՏԵԼԼԵՆՈՒՄ» ճաշարանին մէջ, Մասնաւորութիւն: ●Տոմսերը ստանալու համար դիմել՝ Համազգայինի գրասենեակ, «Շաղոյեան» կեդրոն:

ՆՇՄԱՐ ԱՐՑԱՆԻ ԱԶՍԱՄԱՐՏԻԿՆԵՐԸ ՓԱՍՏՕՐԵՆ ՊԱՅՔԱՐԱԾ ԵՆ ՆԱՒԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՅՐԲԵԿԻՉՆԵՐՈՒ ԴԵՍ

Ըստ ազգային օդային օդակայանի www.day.az կայքի տեղեկութեան, վերջերս Պոլսոյ մէջ երկու սինակոններու, բրիտանական հիւպատոսարանին եւ «Էյ. Էս. Պի. Սի.» դրամատան ակնաւորներուն պատասխանատուութիւնը ստանձնած «Մեծ Արեւելքի Իստանբուլի Մարտիկներ» ահաբեկչական կազմակերպութիւնը իր մասնակցութիւնը բերած է Լեռնային Ղարաբաղի մէջ ծաւալած հայոց դէմ պատերազմին:

Սոյն կազմակերպութիւնը հիմնադրուած է 1985ին, Պինկֆոյլէն սերած խումբ մը մարտի կողմէ եւ 1993էն ի վեր ձեռնարկած է ահաբեկչական բացայայտ ռազմավարութեան, թիրախ ունենալով քրիստոնէական, հրեաներ, եւրոպացիներ, ակնաւորներ, իր կրօնական կեդրոններ, պրօսպարներ: Ըստ հաւանաբար անոնք նաեւ կատարած են Պոլսոյ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եւ Ս. Աստուածածին եկեղեցւոյ ռմբակոծումները:

Բարացուցական է անշուշտ այն, որ ազգային օդակայանի վերոյիշեալ կայքը նաեւ հետեւեալը կը գրէ նշեալ կազմակերպութեան մասին. «Արցախեան ճակատին վրայ խայտառակելի է տք, անոնք վերադարձած են Թուրքիա»:

Այս բոլորը հիմնաւորէ տեղ, եւ մասնաւոր ազգային օդակայանի աղբիւրներէ, ունի մարդ, բայց յատկապէս հայ մարդը հարիւր տոկոս իրաւունք ունի՝ ամենայն հպարտութեամբ ու բարձրաձայն արտայայտելու իր մտածածը, զոր կրնանք այսպէս բանաձեւել:

Իմացած էինք, գիտէինք, որ Լեռնային Ղարաբաղի մէջ հայ պատամարտիկներուն դէմ ոչ միայն կոռուած են պարիսպներ ու թուրքերը (անշուշտ ուս - ուսի տուած...), այլեւ՝ չէին ու աֆղան քաղաքացիները վարձակալներ: Հիմա կու գայ աւելի այլու նաեւ նոր անուն մը, ահաբեկչական նոր խմբակ մը:

Չէ՛հէն, աֆղան, «Մեծ Արեւելքի Իսլամական Մարտիկներ», եւ մասամբ նորին: Այս բոլորին հասարակ յայտարարութիւն է: Այս օրերուն աշխարհին ամբողջ, զիջաւորութեամբ Ռաշիդիկընի, անխնայ պայքար յայտարարած է, որուն դէմ անխտիր բոլոր պետութիւնները կը պայքարին բանի եւ գործով, ի գին նիւթական թէ ֆիզիքական հսկայական պոռոտութիւններու:

Ուրեմն, Լեռնային Ղարաբաղի մէջ հայութիւնը ի խնդիր իր արդար իրաւունքին, ի խնդիր իր բնագրաւորած հողերուն պատասխարութեան մղած կոնիքի փոխառեալ, տասը տարի առաջ իսկ գործնապէս պայքարած է նա՛եւ միջազգային ահաբեկչութեան դէմ եւ փաստօրէն բոլորը զիջիկոր փախցուցած է իր սրբապան հողերէն:

Ուրեմն, մեր անմասն տղաքը, մեր անպուզական պատամարտիկները իրենց կեանքը պոռաբերած են ոչ միայն յանուն պահին ու հայրենիքին, յանուն մարդկութեան արժանապատուութեան, այլեւ յանուն քաղաքակիրթ աշխարհի մը ձեւաւորման, որուն համար այնքա՛ն ճիշդ կը թափուի այսօր երկրագունդի տարածքին:

ՀՐԱՉ ՎԱՐՃԱՊԵՏԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՍԱԿԱՆ ԳՐԱՍԵՆՏԱԿ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՊԱՇՏՈՒԹԵԱՆ ՈՒՇԵՐՈՒ ՌԵՍԱՆՈՂ ՍՊԱՆԵՐՈՒ ԶԻՆՈՒՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Ընդհանուր ապահովութեան ուժերու ընդհանուր տնօրէնութիւնը կը յայտարարէ լիբանանեան իրաւաբանութեան վկայականը կողմ ուսանող սպաներ գինուորագրելու իր կարիքը: Դիմողը պետք է լրացնէ հետեւեալ պայմանները. Ա. Պետք է լիբանանցի ըլլայ աւելի քան 10 տարիներ ի վեր: Բ. Պետք է ըլլայ ամուրի, այրի կամ ամուսնալուծուած՝ առանց զաւակներու: Գ. Պետք է տիրացած ըլլայ լիբանանեան Բ. պաշտօնէին կամ անոր համապատասխան վկայականի մը: Դ. Պետք է տիրացած ըլլայ լիբանանեան իրաւաբանութեան վկայականին՝ ուսումնառութեան տարիներու ընդհանուր միջինը 12/20 եւ վեր միջով: Ե. Պետք է կատարած կամ կատարելիք ըլլայ իր գինուորական պարտադիր ծառայութիւնը: Կրճակ դիմել նաեւ մէկ հատիկները եւ նախապէս զաւակ եղողները: Զ. Դիմում ներկայացուցած թուականին պետք է դիմողին տարիքը 26ը անցած չըլլայ քաղաքային անձերու պարագային, իսկ իսկական ծառայութեան մէջ գտնուող զինուորականներուն պարագային՝ 28 տարիքը: Զաւեւեալ մանրամասնութեանց համար կարելի է դիմել Հայկական Երեսփոխանական Գրասենեակ, Պուրճ Համուտ, «Ճալոյեան» կեդրոն, Բ. յարկ, հեռ. 01 / 259881:

Պետք է լիբանանցի ըլլայ աւելի քան 10 տարիներ ի վեր: Բ. Պետք է ըլլայ ամուրի, այրի կամ ամուսնալուծուած՝ առանց զաւակներու: Գ. Պետք է տիրացած ըլլայ լիբանանեան Բ. պաշտօնէին կամ անոր համապատասխան վկայականի մը: Դ. Պետք է տիրացած ըլլայ լիբանանեան իրաւաբանութեան վկայականին՝ ուսումնառութեան տարիներու ընդհանուր միջինը 12/20 եւ վեր միջով: Ե. Պետք է կատարած կամ կատարելիք ըլլայ իր գինուորական պարտադիր ծառայութիւնը: Կրճակ դիմել նաեւ մէկ հատիկները եւ նախապէս զաւակ եղողները: Զ. Դիմում ներկայացուցած թուականին պետք է դիմողին տարիքը 26ը անցած չըլլայ քաղաքային անձերու պարագային, իսկ իսկական ծառայութեան մէջ գտնուող զինուորականներուն պարագային՝ 28 տարիքը: Զաւեւեալ մանրամասնութեանց համար կարելի է դիմել Հայկական Երեսփոխանական Գրասենեակ, Պուրճ Համուտ, «Ճալոյեան» կեդրոն, Բ. յարկ, հեռ. 01 / 259881:

ԿԻԼԻԿԵԱՆ ՍՈՒՐԲ ԱԹՈՒԻՆ ՀԱԻԱՏԱՐԻՄ ՉԻՆՈՒՈՐԸ (ՍԱՇԱԿ ԱՐՔ. ԱՅՎԱԶԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ)

Կիլիկեան Սուրբ Արոտը կորսնցուց իր երեք միաբաններէն, արժանաւոր եկեղեցական, Յուստինի հայոց բեմի երկարամեայ առաջնորդ Սահակ արք. Այվազեանը:

Սփիւքի տարածքին տարբեր թեմերու մէջ գործող մեր քաջ հովիւները, որոնք յաջողեցան տուեալ ժամանակաշրջանին տաճարային լաւագոյնս դիմակալելու եւ թումբ բարձրացնելու բազում արգելքներու առջեւ, իրենց վարժող եւ բարձր վատմուրթի կերտեցին: Յետ եղեռնեան պատմութիւն մը, որ այնքան ալ հեզասահ չընթացաւ եւ բնորոշուեցաւ վերիվայրումներով, ընկրկումներով, դաւաճանութեամբ, յուսալքումով եւ դատաւարութեամբ: Խոնարհ տարիներ էին եւ մարդիկ այնքան կորսնցուցանուած էին իրենց բանականութիւնը եւ խոհեմութիւնը, որ Զարեհ Ա. սրբակեց սքանչելի Քոլոզոբայ հանել փորձեցին:

Ամենայն դեպք աւօրալի արարքներուն եւ այդ ժամանակահատուածին գնահատականը ձգեցնել պատմութեան վեճիկին եւ արձանագրել այդ օրերուն Անթիլիասի դարաւոր սուրբ քառուիկ գոյութեան եւ յարատեւման դէմ ցցուած արգելքներուն եւ խոչընդոտներուն չէզոքացման համար իրենց անգնահատելի ներդրումը բերած փառանք մը եկեղեցականներուն մէջ Սահակ արքային ազգաշէն դերակատարութիւնը, որ արդիւնք էր Կիլիկեան այս պատմական աթոռին առաքելութեան շերտերէն հաւատացող նուիրեալ գիւնդարագրեալին ազգային, գաղափարական խոր համոզումներուն, թէ՛ Անթիլիասը միայն շէնքը ու շինութիւն չէ, այլ հայութեան արեւմտահայ հատուածին ազգային տենչերուն արտայայտիչը, կորսուած անգիր հոգիին փոխարէն ինքնուրոպեան ամուր պատուանդանը, փորձարկող հոգիները հանգստացնող խաղաղ ցաւահանգիստն ու ազգային պատկանելիութեան եւ դիմագիծի Կիլիկեան հայադրոշմ կնիքը: Սահակ վարդապետը իր միաբանակից եղբայրներուն հետ կողք կողքի մնաց պատեհչի վրայ եւ այն ամէն չարախօսութիւնները, բանասարկութիւնները եւ հալածանքը զինք ու իր եղբայրները տկարացնելու փոխարէն աւելի գօտեպնդեցին, ամրապնդեցին եւ երբ Զարեհ սքանչելիի աստուածահան օծումով Կիլիկեան սուրբ արոտը իր ընտրելի վեհափառ գտաւ, Սահակ վարդապետը եւ միւսները թե ուր պրկուեց եղան վեհափառին ու պահեցին սուրբ արոտը:

Պատմութիւնը իր վեճիկը պիտի արձակէ վատահարաւ այդ ժամանակահատուածին մասին: Բայց ժողովուրդը իր գնահատականը արդէն ունեւծ է անբասիր եւ արժանաւոր եկեղեցականներուն մասին, եկեղեցականներ, որոնք անասան կը պահեն եկեղեցին իրենց նուիրումով եւ հաւատքով: Նորոգ վախճանեալ Սահակ արք. Այվազեան քաջ հովիւն է մեր դարաւոր եկեղեցիին եւ մանաւանդ՝ Կիլիկեան Սուրբ Արոտին օրինակելի սպասաւորն է, որ մնաց հաւատարիմ գիւնդորը՝ Աստուծոյ եւ ազգին:

Խուճկ եւ աղօթք Սահակ արք. Այվազեանի յիշատակին ու նաեւ ի խորոց սրտի մաղթանք մը, որ Կիլիկեան դարաւոր միաբանութեան շարքերը խտանան եւ համարուին Սուրբ Արոտին երջանկայիշատակ վեհափառներուն տեսիլքը իրենց ուղեցոյցին վերածած արժանաւոր եկեղեցականներով, որոնք պիտի միանան Անթիլիասի ներկայ սպասաւորներուն՝ առաւել ծաղկեցնելու համար Կիլիկեան պատմական եւ անխորտակելի Արոտը:

Ա. ԱՊՏԱԼԵԱՆ

ՏՈՔԹ. ՊԵՐՃ ՄԻՆԱՍԵԱՆԻ ԽՄԲԱԿԸ ԿԸ ՅԱՅՏՆԱԲԵՐԸ «ԼԱՀՈՐԱ» ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆ ԾԻՆԸ

Քանատահայ ներդարան բժիշկ Պերճ Մինասեանի գիտաշխատող խմբակը վերջերս յաջողած է յայտնաբերել հարուստ հիւանդութեան «Լահորա» տարբերակին զարգացման պատճառ դարձող ծինը:

Տոքթ. Պերճ Մինասեան, որ գիտաշխատող բժիշկներէն է Թորոնթոյի «Հոսփիթըլ Ֆոր սիք չիլտրն» հիւանդանոցին, 1997ին յայտնաբերած է «Լահորա»ի առաջին տարբերակին ծինը: Անոր այս կարեւոր յայտնաբերումը իրենանոց է հիւանդութեան մասին գիտաշխատութիւնները եւ անոր բուժման ընթացքը:

«Լահորա» հիւանդութիւնը, որ կրնայ մահացու կերպով հարուածել մէկ միլիոն անձէն մէկը, տակաւին անբուժելի է: Սակայն անոր ծիններուն յայտնաբերումը բժշկագիտական աշխարհին յոյս կը ներշնչէ գտնելու անոր դարմանը:

ՀԱՅ ՀԱՍԱՅՆԵՐ ԸՆԿԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՒՆ

ՄՏՔՈՎ ԹԵՐԱՃ ՀԱՅ՝ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ «ՁՈՒԱՐԹՆՈՅ» ԿԵԳՐՈՆ

ՈՒՏԵՍՏԵՂԵՆԻ ԵՒ ՉԵՌԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒ ՏՕՆԱՎԱՃԱՌ

Տեղի կ'ունենայ 4 եւ 5 Դեկտեմբեր, 2003, կեսօր առաջ ժամը 10:00Ը սկսեալ մինչեւ ժամը 4:00, կեսօրը ետք՝ «Չուարթնոց» կեդրոնի մէջ:

Հասցէ.- Հայ Աւետարանական հոգեւոր եկեղեցւոյ շրջափակ:

ՀՐԱՄԵՐ

ԲԱՐԱՑՈՒՑԱԿԱՆ ԴՐՈՒԱԳՆԵՐ

Դպրոցի հիմնումը նախորդող հերոսական տարիէն կ'ուզեմ արձանագրել դրուագներ, որոնք բարացուցական են եւ կը վկայեն թերահաւատութեան վրայ գումարուող մթնոլորտի մասին:

Քաղաքի երեւելիներէն, միութենական պատասխանատու եւ ունեւոր անձի մը հետ կ'ուզէի տեսակցիլ: Ի վերջոյ, դպրոցը, ըլլալով հանդերձ Համագրայինի նախաձեռնութիւն, պիտի ծառայէր համայնքին: Ենթական տեղեակ էր ծրագրէն, բայց կարելի չեղաւ տեսակցիլ, պարզապէս խուսափեցաւ, աւելին չըսելու համար: Ի վերջոյ հեռաձայնային խօսակցութեան մը ընթացքին յայտնեց, որ ինք, իրենք, ուսումնասիրած են դպրոց հիմնելու ծրագիրը, բայց եզրակացուցած են որ ան հաստատարելի չէ, rentable չէ: Օժանդակող քանի որ բարեկամներ ըսին, թէ ազատ ասպարէզի անձ մը տարիներէ ի վեր ուսումնասիրութիւններ կը կատարէր դպրոցի մը ստեղծման համար: Ժամագրութեամբ գացինք տեսակցութեան: Ենթական բժախորդօրէն նիւթեր հաւաքած էր: Եկաւ պահ մը, երբ հարցուց, որ եթէ դպրոցը բացուի, հող գնուի, շէնք կառուցուի, գրասեղան, նստարան եւ սարքեր բերուին, եւ դպրոցը փակուի, որո՞ւ պիտի պատկանին այդ բոլորը: Պատասխանեցի որ դպրոցը փակուելէ ետք հոգս չէր, թէ որո՞ւ սեփականութիւն պիտի դառնային այդ բոլորը: Զրոյցը կարելի չէր շարունակել: Քաղաքավարութեամբ հրաժեշտ տուի: Ուրիշ մը լսեց, խանդավառուեցաւ, ըսաւ որ լաւ ծրագիր էր, բայց նախ դուրսէն եկածներ իրենց գաւակները պէտք էր զրկէին, եւ եթէ դպրոցը յաջողէր, տեղացիներն այ կը զրկէին: Զորքող մը, համաՖրանսական մակարդակով գիտաշխատող, դէմ չէր ծրագրին, պայմանաւ որ հիմնուէր ընտրանիի դպրոց մը:

Այս թատերական հանդիպումները այսպէս վերլուծման կը կարօտին, հասկնալու համար մտայնութիւնները եւ ժամանակը, նաեւ՝ թէ ի՞նչպէս աստիճանաբար հարկ եղաւ զանոնք տալել: Եթէ օր մը Ֆրանսայի հայ գաղութիին պատմութիւնը գրուի, հոլովոյթը ուսումնասիրուի, Համագրայինի վարժարանին նկատմամբ որդեգրուած կեցածքներու վերլուծումը ըմբռնման չտեմարան կրնայ ըլլալ:

Այդ օրերուն այցելութեան գացի Անարատ Յղութեան Հայ Կաթողիկէ Քոլլեճը վարժարանը, որուն մասին լսած էի: Քոլլեճը կը թափազանց գործին ծանօթ էի, ուրիշ երկիրներու մէջ: Բայց Մարտիի պառազային ըսած էի, որ դպրոցի աշակերտներու ստուար մեծամասնութիւնը հայ չէր: Մեր սեփականութիւնը եղաւ սիրալիր: Հայ աշակերտներու թիւի անբաւարարութեան պատճառով, ընդունած են ոչ հայեր, որոնք դարձած են մեծամասնութիւն: Այն հարցումին, թէ ե՞րբ եւ ի՞նչպէս տեղի կ'ունենան հայերէնի դասընթացները, ըսին, որ ճաշի

դադարին հայերուն կը տրուէին հայերէնի դասեր: Սրտքայ գրոյցի ընթացքին ըսի որ մօտեցումը հակամանկավարժական էր, եւ մանուկը բացասական կերպով կը տրամադրէր հայերէնի դէմ: Երբ ըսին, թէ ի՞նչ այլ լուծում կրնար ըլլալ, ամենայն պարզութեամբ պատասխանեցի, որ մեկնելով հայ դպրոցի նպատակէն եւ կոչուէն, եւ դուրսը կը փակէի եւ կը մեկնէի... Յամենայնդէպս, քորբերը մարթեցին, որ Համագրայինի նախաձեռնութիւնը յաջողութեամբ պսակուի:

Ապագայ դպրոցին տիրութիւն ընելու կոչուած միութիւն մը հիմնելու աշխատանքներուն ձեռնարկուեցաւ: Մարտիի իւրապատուել մթնոլորտին մէջ քարացած մտայնութիւնները կային, գաղափարախօսական - քաղաքական կնիքով: Քանի որ դպրոցը համայնքին պիտի ծառայէր, ան չէր կրնար ինքզինք բանտարկել հատուածականութեան մէջ: Հետեւաբար կային հաստատուեցան զանազան անձերու հետ, Մարտի, բայց նաեւ՝ Փարիզ եւ Լիոն, զանազան հորիզոններու պատկանող անձերու հետ: Ումանք սիրով ընդհանրեցին, ուրիշներու պարագային հանդիպեցանք մերժումի, որովհետեւ Համագրայինը մաս կազմելով Հ. Յ. Դաշնակցութեան գաղափարական ընտանիքին, աւանդաբար իրենք զիրենք հակադաշնակցականութեամբ սահմանող շրջանակները բացասական վերաբերում ունեցան: Բայց նաեւ համայնքին հայրէն գոյատեւման նախաձեռնողի մարդիկ գտնուեցան, որոնք գերանցում կատարեցին եւ գործակցեցան, եւ ստեղծման օրէն մինչեւ այսօր անոնք կը հանդիսանան լաւագոյն նեցուկները հայկական վարժարանին, առանց յամենայնու ենթադրաբարական ճառերու եւ կարգախօսներու ամուլութեան մէջ: Նոր միութեան ազգային-մշակութային ընդունելի եւ ոչ խնդրալարոյց պատկեր մը տալու համար խօսակցութիւններ ունեցանք պատրաստութիւն եւ կշիռ ունեցող անձերու հետ, բայց նաեւ՝ անձերու հետ, որոնք միութենական կեանքի հետ չէին առնչուած: Գլխաւոր դժուարութիւնը կը ըլնէր անկէ որ հայկական վարժարանի փորձ եւ փորձառութիւն կը բացակայէին: Գժուարութեամբ կարելի եղաւ հիմնադիր ըլլալու կոչուած անձերու ցանկ մը կազմել, հակառակ տիրող մտայնութիւններու, որոնք ծնունդ կու տային վերապահութիւններու: Զարմանալի կերպով, մարդիկ կային որոնք դէմ չէին դպրոցի հիմնումին, բայց չէին ուզեր մասնակից ըլլալ ձախող նախաձեռնութեան մը: Դէմ ըլլալու չափ բացասական վերաբերում մը, մարդոց կողմէ որոնք զօրակցութեան կարիք կար:

(Շար. 2)

3. ՊԱՆԵԱՆ

ՎՐԱՍՏԱՆԻ ՆՈՐ ԻՇԽԱՆԱԻՈՐՆԵՐԸ ԵՒ ԱՌԳՈՅ ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐԸ

Վրաստանում տեղի ունեցած թաւաշէն յեղափոխութեամբ իշխանութիւնից հեռացած Շեւարտնանովն զբեւեռեց ինքնակամ կերպով վերջակէտ դրեց իր քաղաքական կենսագրութեանը եւ այդ իմաստով ի համեմատ իր նախորդի՝ Կոմսոստրուտիայի, չնգովեց մրցակից-ընդդէմադիրներին կողմին: Այս վերջինները, սակայն, որ ժամանակին գործաւորական Ռուսաստանի հեղինակաւոր արտաքին գործոց նախարարին հոփանաւորել էին սեփական անկախ երկրում եւս բարեկարգումներ մտցնելու համար, ի վերջոյ երես թեքեցին նրանից, որն ինչ խօսք՝ ներքին թէ արտաքին քաղաքական ու տնտեսադիւն ոլորտներում չյաջողեց հարկ եղած կայունութիւնը եւ յառաջիկայի համար արձանագրեց: Վրաստանի վերջին իրադարձութիւններում ակնբախ էին մեր շարք գործօններ, որոնք յանդերձ բայց թաւաշէն յեղափոխութեանը եւ ընդհանրապէս են հետեւեալ կերպով:

1.- Խորհրդարանական վերջին ընտրութիւններում ծաւալուել կեղծիքներ ի պատճառով ընդդիմադիր թեւերի միահամուռ ընդվզմանը դէմ յանդիման չգնացին երկրի բնակային-ուժային կառույցները, նոյնիսկ երբ ընդդիմադիրները ուժի գործողութեամբ գրաւեցին խորհրդարանն ու նախագահական նստավայրը:

2.- Խորհրդարանական ընտրութիւնների կեղծիքներին առթիւ Ամերիկան սկզբում մեղմ, իսկ ընդ յետոյ խիստ քննադատական ոճ կիրառեց՝ անընդհատ յայտարարելով, որ Վրաստանի անցողիկ ձեռքերին ինքը հետամուտ է աջակցութիւնը:

3.- Երբ Շեւարտնանովն

նքնիւն-րանակցային հնարքները ապարդիւն անցան, նա անուղղակի դիմեց ռուսական գործօնայինները, որը բնական է, ստեղծուած կացութեան բերումով, չէր դիմելու ծայրայեղ քայլերի եւ բաւարարութիւնը դիւանագիտական լուծումներին կիրառմամբ՝ իր ներկայութիւնը հաստատեց Վրաստանում՝ ի դէմս իր իսկ արտաքին գործոց նախարար Իկոր Ժվանովի:

3.- Քաղաքական հաշուարկները, այսպիսով, բերեցին նրան, որ գոյացաւ մի չյայտարարուած համաձայնութիւն՝ Մ. Ն. Նախագահներու Ռուսաստանի միջեւ, եւ անմիջական արդիւնքում ինքը՝ Շեւարտնանովն, որ մինչ այդ «ոչ մի զիջում» մարտափառութիւնն էր որդեգրել, համաձայնեց ինքնակամ հրաժարուելու, նոյնիսկ առանց որեւէ նախապայման ներկայացնելու:

Ինչեւէ, Վրաստանի նոր իշխանաւորները չուտով կազմակերպելու են նախագահական ու խորհրդարանական ընտրութիւններ՝ դէմ յանդիման կանգնելով նոյն ներքին թէ արտաքին ու շրջա-

Vivez en lumière!

G. AYANIAN & SONS

Dora, (01) 255222/3/4/5/6 - Gemmayze, (01) 447000-445396 - (03) 627723/9
 Fax: (01) 265187-582357; E-Mail: gasons@dm.net.lb
 www.ayanian.com

Հարպոյեան Կեդրոն • Bloc C • Պուրճ Համուտ • Էտն. 01 253008

Բնակնդի Աշխատանք • Սրահ Սպասարկութիւն • Սերտուած Գիւնք

ՇԻՐԱԿ

ՏՊԱՐԱՆ • ՀՐԱՏԱՐԱԿՉԱՏՈՒՆ

Առեւտրական Տպագրութիւն

Այցետոմսեր - Նամակի Թուղթեր - Պահարաններ
 Թուղթիկներ - Հաշուեցոյցներ - Ստացագիրներ
 Որմագրներ - Պիտակներ - Կնիքներ - Ել.Ա.

Միութենական եւ Դպրոցական Տպագրական Աշխատանքներ

Յայտագիրներ - Հրահրատոմսեր - Օրացոյցներ
 Վիճակցոյցներ - Վկայականներ - Տարեգրքեր
 Պարբերաթերթեր - Ել.Ա.

Հարսանեկան Քարտերու Ծոխ Հաւաքածոյ

ՔԵՍԱԿ 2003

ԱԿՆԱՐԿ ՔԵՍԱԿԻ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՆ ՎՐԱՅ

Ինչպես ամեն տարի, այս տարի եւս պատեհութիւնը ունեցանք այցելելու Կիրիկեան աշխարհէն Կանգոն մնացած հայկական միակընթացը՝ Քեսապ: Հաճոյքով հետեւեցանք հայրենակիցներու առօրեայ կեանքին, աշխատանքին, ինչպէս նաեւ՝ գաւառի ազգային, եկեղեցական, կրթական ու մշակութային կեանքի տարբեր երեւոյթներուն:

ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐ

Քեսապ ավանին մէջ գործող հայկական երեք դպրոցները՝ ազգային, կաթողիկէ եւ աւետարանական, իւրաքանչիւրը իր կարգին մեծ դժուարութիւններու ու զոհողութիւններու գնով կը ջանայ կանգուն պահել գաւառին կրթական եւ մշակութային կեանքը:

Ազգային Ուսումնասիրաց Միացեալ վարժարանը նախորդ՝ 2002-2003 տարեշրջանին 157 աշակերտ ունէր: Գաղտնիքով հանդէսը տեղի ունեցաւ Կիրակի, 8 Յունիս 2003ին: Վկայական ստացան քսաներկու շրջանաւարտներ, իսկ մանկապարտէզէն՝ տասներկու մանուկներ: Վկայականաց բաշխումը կատարեց տէր Եղիշէ քահանայ Սարգիսեան, որ յուզու մնախառն զգացումներով ըսաւ. «Առաջին տարին, երբ Քեսապ եկայ, ինծի համար նոր հանգրուան մըն էր: Գիտ զիմաւորեցին այսօրուան շրջանաւարտները, երբ մանկապարտէզի վկայականները իրենց ձեռքին, իրենք եւս նոր հանգրուան մը կը պատրաստուէին բարձրագոյն: Իրարու աչքերուն մէջ տեսանք ապահովութիւնը, եւ իրարմով գորացած՝ սկսանք մեր երբը, նոր հանգրուանի բոլոր դժուարութիւնները միաս-

համակարգիչի դասընթացը հաստատուած է: Դպրոցը ներկայ՝ 2003-2004 տարեշրջանին 68 աշակերտ ունի, որուն 23ը՝ մանկապարտէզի մէջ:

Աւետարանական Նահատակաց Միացեալ վարժարանը անցնող տարեշրջանին վաթսուեւ աշակերտ ունէր: շրջանաւարտ եղան վեց աշակերտներ (երկուքը՝ արաբ): Գաղտնիքով տարեշրջանին 63 աշակերտ ունի, որուն 13ը՝ մանկապարտէզի մէջ:

Դպրոցին մէջ ամէն առաւօտ կէս ժամ տեւողութեամբ պաշտամունք կը կատարուի, որուն ընթացքին հոգեւոր, դաստիարակչական, ազգային, պատմական, գրական, ընկերային, կենսոլորտի, առողջապահութեան եւ այլեւայլ նիւթերու մասին դասախօսութիւններ կը տրուին: Երկու ամիս նաեւ դուրսէն հիւր դասախօսներ կը հրաւիրուին:

Նահատակաց վարժարանը անցնող տարեշրջանին մեծ շուքով, դասախօսական ձեռնարկներով ու հանդիսութիւններով նշեց իր հիմնադրութեան 150ամեակը: Նշեք, որ անցեալին անկախ իր կրթական մակարդակով հաւասար եղած է Այնթապի Ամերիկեան Աղջկանց բարձրագոյն վարժարանին, իսկ ընթացաւարտ կարգը՝ Այնթապի Թուրքիոյ Կեդրոնական քոլէճի վեցերորդ դասարանին: 1911ին ճանչցուած է իբրեւ բարձրագոյն վարժարան. ունեցած է նաեւ գիշերօթիկի բաժին:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Քեսապի հայութեան հոգեւոր կեանքը կեդրոնացած է Քեսապ ավանի եւ Գալատուրանի համանուն Ս. Աստուածածին եկեղեցիներուն շուրջ: Էսկիւրանի Ս. Աստուածածին մատրան մէջ տարի մէկ անգամ պատարագ կը մատուցուի, իսկ Գալատուրանի Սոփոկա թաղի Ս. Ստեփանոս եկեղեցւոյ դռները տարին քանի մը անգամ, մկրտութեան կամ այլ առիթներով կը բացուին: Գաւառին հոգեւոր հովիւն է տէր Եղիշէ քահանայ Սարգիսեան, որ իր քահանայագործութենէն՝ 1997էն ի վեր կը ծառայէ Քեսապի հայութեան: Տարիներու աւանդութեան համաձայն, ամսուան երեք կամ չորս Կիրակին պատարագ կը մատուցուի Քեսապի եկեղեցւոյ մէջ, իսկ վերջին Կիրակին՝ Գալատուրանի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ: Միայն ամբարն, Յուլիս եւ Օգոստոս ամիսներուն կարգը կը խախտի ամարանոց բարձրացողներու եւ զբօսաշրջիկներու ներկայութեան պատճառով, եւ ամէն Կիրակի Քեսապի եկեղեցւոյ մէջ պատարագ կը մատուցուի:

Մոռնողին, Երկուշաբթի, 6 Յունուար 2003ի առաւօտուն, հակառակ սաստիկ ցուրտին, հաւատացեալ ժողովուրդը իր աւանդական ամուր հաւատքին հաւատարիմ, իր հոգեւոր պարտականութեան գիտակից փութաց եկեղեցի՝ հաղորդուելու Քրիստոսի հրաշափառ Մննդեան խորհուրդով:

Տեսանքդառաջին, Հինգշաբթի, 13 Փետրուար 2003ի երեկոյեան եկեղեցական արարողութիւն կատարուեցաւ Քեսապի եկեղեցւոյ մէջ, բայց ձիւնին պատճառով կարելի չեղաւ աւանդական խորոյզը վառել:

Ղեկնղեանց տօնին, Չորեքշաբթի, 26 Փետրուար 2003ին, ամբողջ Քեսապ ձիւնով ծածկուած ըլլալով՝ ժողովուրդը չկրցաւ եկեղեցի փութալ, եւ միայն երեք հոգիով պատարագ մատուցուեցաւ:

Յաջորդ օր, Վարդանանցին, Քեսապի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ Ս. պատարագ մատուցուեցաւ եւ յատուկ յիշատակութեամբ նշուեցաւ Վարդանանց տօնը: այս առիթով տէր Եղիշէ քահանայ իր պատգամ փոխանցելով՝ ըսաւ. «Մենք իբրեւ Ղեկնղեանց սերունդի ժառանգորդներ մեր ուսերուն դրուած է այն առաքելութիւնը, որ մեզմէ կը պահանջէ ըլլալ հաւատքի առաջնորդներ, սերունդները մղելու կրօնասիրութեան: Կը պահանջէ ըլլալ գիտութիւն ջամբող մու գիտութեան հետեւ ու տուժիչ, առաւել եւս մօտ ըլլալու ներկայ սերունդին: Կը պահանջէ ըլլալ այնպիսի, որուն մէջ այսօրուան իրիտասարդ պիտի տեսնէ հոգեւորականը,

գիտնականը, ծառայատէրը եւ դէպի այդ առաջնորդողը»:

Քառասնօրեայ պահեցողութեան շրջանին ամէն Չորեքշաբթի եւ Ուրբաթ Արեւազալի եւ Հսկուամի արարողութիւնները անխափան կատարուեցան Քեսապի եկեղեցւոյ մէջ, որ հոգեկան գոհունակութեան առիթ եղաւ հաւատացեալ ժողովուրդին համար: Ուշագրաւ էր յատկապէս պատանիներու ներկայութիւնը, որոնք իրենց մատողաշ ձայներով կը բարբառէին «Նայեալ սիրով», «ԻՔէն հայցեմք», «Ի խորոց սրտի», «Հաւատով խոստովանիմ» եւ այլ մեղեդիներ, հոգեւոր հաղորդակցութեան մէջ մտնելով Շնորհալիներու եւ Նարեկացիներու հետ: Ենթին հսկումին նախորդող օրը, Հինգշաբթի, 10 Ապրիլի երեկոյեան հսկումի արարողութիւն տեղի ունեցաւ Գալատուրանի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ՝ շրջանին ժողովուրդը եւս մասնակից դարձնելու համար հոգեպարար արարողութեան:

Ծաղկազարդին, 13 Ապրիլին, մեծ թիւով մանուկներ ու հաւատացեալ ժողովուրդ ձիւնեթի ռոտերով գիմաւորեցին Յիսուսի Երուսաղէմ մուտքը:

Աւագ Հինգշաբթի, 17 Ապրիլի առաւօտուն տեղի ունեցաւ Ս. պատարագ եւ հաղորդութիւն, յետմիջօրէին՝ Ունուալ. խորհրդաւոր էր մանաւանդ ինաւարման գիշերը: Ծրագրաւորեցին եւ Ս. Զատիկուան տօնին կրօնական, ծիսական բոլոր պարտաւորութիւնները լիակատար կերպով եղան: Բայց աւանդական ուրախութիւնը, հակաթաղաղ տեղին չունեցաւ իրաքի պատերազմին պատճառով: նախատեսուած բոլոր ձեռնարկներ կամ չեղեալ նկատուեցան եւ կամայ յատուկ պատշաճութեամբ տեղի ունեցան:

Յուլիս 21 - 24 ՔՋԱԿի մէջ տեղի ունեցաւ հայ եկեղեցւոյ Կիրակնօրեայ վարժարաններու համագումար: Անթիլիասի մայրավանքին ժամանած էին հայ Մաշտոց վարդապետ Չոպանեան, վարիչ-տնօրէն Քրիստոնէական Դաստիարակութեան բաժանմունքին, եւ հայր Մակար արեղայ Ազգարեան. ներկայ էին մօտաւորապէս եօթնասուն հոգի՝ Հայկապէն, Լաթաքիայէն, Քեսապէն եւ Գամիշլիէն, Սուրիոյ Կիրակնօրեայ խորհուրդի ատենապետը՝ տէր Արսէն քահանայ Սարգիսեան եւ Քեսապի հովիւ տէր Եղիշէ քահանայ Սարգիսեան: Չորսօրեայ հոգեպարար համագումարին ընթացքին շեշտը դրուեցաւ եկեղեցի-բրիտասարդութիւն փոխյարաբերութեան վրայ: Հայր Մակար արեղայ դասախօսեց Աստուածաշունչին եւ մերօրեայ իրավիճակին մասին: Շարականներու ուսուցումով մասնակցողները առաւել եւս մօտէն ծանօթացան մեր եկեղեցական գանձերուն ու անոնց հեղինակներուն:

Հինգշաբթի, 24 Յուլիսին Քեսապի եկեղեցւոյ մէջ պատարագեց հայ Մակար արեղայ եւ:

Համագումարի աւարտին տեղի ունեցաւ ճաշկերոյթ՝ Վարի Պաղճաղազի «Հրաչ» ճաշարանին մէջ, որուն հրաւիրուած էր նաեւ Քեսապի եկեղեցւոյ թաղականութիւնը: Հաճելի ժամեր անցընելէ ետք, տպաւորուած համագումարի միջնորդտէն, մասնակիցները մեկնեցան քաղցր յուշեր տանելով իրենց հետ:

Հայկապէ Ս. Աստուածածին եկեղեցւոյ դպրաց դասը Սեպտեմբերի 9ին ժամանեց Քեսապ եւ եկեղեցւոյ մէջ հոգեւոր մտամփոփման օր մը կազմակերպեց, որուն ընթացքին շարականի երգեցողութիւն տեղի ունեցաւ, իսկ տէր Եղիշէ քահանայ իր պատգամ փոխանցեց:

Սեպտեմբեր 11ին ժամանեց Հայկապէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ դպրաց դասը, որ Կիրակի, 14 Սեպտեմբերին, ինչպէս արեւմտեան, քառօժայն երգեցողութեամբ իր մասնակցութիւնը բերաւ Սուրբ պատարագին:

Ս. ԱՍՏՈՒԾԱԾՆԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ամէն տարուան աւանդութեան համաձայն, այս տարի եւս Ս. Աստուածածին տօնուեցաւ պատշաճ շուքով: Ուխտաւորներ ժամանած էին Հայկապէն, Գամիշլիէն, Դամասկոսէն, Լաթաքիայէն, Լիբանանէն եւ այլ շրջաններէ, որոնք իրենց ներկայութեամբ կը փաստէին հաւատքի եւ հաւատարմութեան նկատմամբ իրենց ակնածանքը:

Շաբաթ, 16 Օգոստոսի յետմիջօրէին առաջնորդ Սուրբն արք. Գաթարոյեան իր շքախումբ-



Կաթողիկէ Ս. Միքայէլ եկեղեցին եւ Բարեյուսոյ վարժարանը




Քեսապի Ս. Աստուածածին եկեղեցին

ճարար ղիմագրաւելու»:

Դպրոցը այս տարեշրջանին բախտաւորութիւնը ունեցաւ իր տարիներու երազը իրականացնելով՝ միջնակարգ առաջին դասարան մը բանալով: Այս տարի բացուեցաւ եօթներորդ դասարանը, յառաջիկայ տարի պիտի բացուի ութներորդը, իսկ յաջորդ տարի՝ իններորդ դասարանը, որովհետեւ պետութեան մինչեւ իններորդ բանալու արտօնագիր առնուած է:

Ուսումնասիրաց վարժարանին միջնակարգի վերածուելը շատ մը դժուարութիւններ հարթելու եւ իրենց գաւառներուն ուսման համար ընտանիքով Հայկապէ գաղթին առաջը առնելու յոյսը կը ներշնչէ: Այս տարի եօթներորդը ունի քսաներկու հայ աշակերտ, որոնց չորսը աւետարանական վարժարանէն եկած են: Այսպիսով, կարծէք դպրոցներու միացման, մէկ դպրոց ըլլալու գաղափարը սկսած է իրականանալ: Որակեալ ուսուցիչներ ունենալու նախանձանդութեամբ դպրոցը գիտական թէ՛ գրական նիւթերու համար համալսարանական վկայական ունեցող ուսուցիչ-ուսուցչուհիներ հրաւիրած է, իսկ եօթներորդ դասարանին համար ներմուծուեցաւ Ֆրանսերէն, եւ Ֆրանսական գրականութեան մասնագէտ ուսուցչուհի մը պաշտօնի հրաւիրուեցաւ: Դպրոցը այս՝ 2003-2004 տարեշրջանին 170 աշակերտ ունի:

Կաթողիկէ Բարեյուսոյ վարժարանը նախորդ տարեշրջանին 55 աշակերտ ունէր: վկայականաց բաշխումի պաշտօնական հանդիսութիւն տեղի չունեցաւ, որովհետեւ կրթական նոր ծրագիրի հիմամբ այսուհետեւ նախակրթարանէն վկայական ստանալու դրութիւնը վերացուած է, եւ փոխարէնը միջնակարգ իններորդ դասարանը աւարտողները վկայական պիտի ստանան: Նշեք, որ դպրոցին մէջ երրորդ դասարանէն



Աւետարանական Նահատակաց Միացեալ վարժարանը

րին հետ Արամոյէն ժամանեց Քեսապ, որմէ ետք Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ կատարուեցաւ երեկոյեան ժամերգութիւն եւ նախատօնակ:

Կիրակի առաւօտ Քեսապի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ պատարագեց եւ քարոզեց Սուրբն սրբազան, իսկ տէր Եղիշէ եւ Հայկապէն ժամանած տէր Տաթեւ քահանայ Միքայէլեան սպասարկեցին սրբազանին. յաւարտ Ս. պատարագի կատարուեցաւ խաղողօրհնէք:

Եկեղեցական արարողութեանէն ետք Հայկապէն ժամանած փողերախումբը եկեղեցական թափօրը եւ ուխտաւոր բազմութիւնը առաջնորդեց դէպի «Քեսապ» համալիր: Առաջնորդ սրբազան իր պատգամը փոխանցեց խուռներամ բազմութեան եւ Սուրբոյ մէջ Հ.Մ.Լ.Մ.ի 85ամեակին առիթով վեր առաւ մարզական այս մեծ կազմակերպութեան բազմաբեղուն գործունէութիւնը եւ զրուստական արտայայտութիւններ ունեցաւ անոր նկատմամբ:

Յետմիջօրէին ուխտաւոր բազմութիւնը ուղղուեցաւ էսկիւրան, ուր տեղի ունեցաւ աղօթհնէք եւ ոչխարներու գնում: Երեկոյեան Հ. Ե. Ը.ի փողերախումբը տողանցեց Քեսապի հրապարակին շուրջ: Գիշերը, մինչեւ առաւօտ տօնախմբութիւն կատարուեցաւ էսկիւրանի հրապարակը:

Երկուշաբթի առաւօտ էսկիւրանի Ս. Աստուածածին մատրան մէջ պատարագեց տէր Տաթեւ քահանայ Միքայէլեան, որմէ ետք սրբազան հօր նախագահութեամբ օրհնուեցաւ մատաղը եւ բաշխուեցաւ ժողովուրդին: Կէսօրին Քեսապի եկեղեցւոյ թաղականութիւնը ի պատիւ սրբազան հօր, դպրաց դասին եւ միութիւններուն ճաշկերոյթ մը տուաւ «Քեսապ» համալիրին մէջ:

Երեքշաբթի, 19 Օգոստոսը Գալատուրանի Ս. Աստուածածին եկեղեցւոյ տօնն էր, եւ ուխտաւորներ ու հովիտին բնակչութիւնը լեցուցած էին եկեղեցին եւ ընդարձակ շրջափակը: Պատար-



Կապիսու լեռը

րագեց տէր Եղիշէ քահանայ, Քեսապի եկեղեցւոյ դպրաց դասը կատարեց երգեցողութիւնը, իսկ Սուրբն սրբազան իր պատգամը փոխանցեց: Ս. պատարագի աւարտին կատարուեցաւ խաղողօրհնէք:

Կէսօրին Գալատուրանի եկեղեցւոյ թաղականութիւնը ի պատիւ սրբազան հօր ճաշկերոյթ մը տուաւ «Քեսապ» համալիրին մէջ: Սրբազանը իր օրհնութիւնը տալէն ետք մեկնեցաւ Հայկապէ յառաջիկայ շաբաթներուն Բերիոյ թեմի այլ շրջաններու հայ հաւատացեալ ժողովուրդին հետ ըլլալու: Նշեք, որ Աստուածածինէն շաբաթ մը ետք Ղնեմիէի Ս. Գէորգ եկեղեցւոյ օրն է (թէ՛ եւ Սուրբ Գէորգի տօնը է)՝ այդ առիթով տօնախմբութիւն կը կատարուի եւ հերթապ կ'եփուի: Օգոստոսի վերջին Կիրակին Եպարտիէի Ս. Աննա եկեղեցւոյ տօնն է, որուն առիթով եւս տօնախմբութիւն կը կատարուի եւ մատաղ կը բաժնուի: Իսկ ինչպէս արեւմտեան թէ՛ Ապրիտի եկեղեցւոյ տօնն է, որ հոգեկան գոհունակութեան առիթ մըն է շրջանին երեսուն հայ ընտանիքներուն համար:

ԱՅԿԻԼ AFHIL

ԲԺՇԿԱԿԱՆ ՏՆԱՅԻՆ ՍԱՐՔԵՐՈՒ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ

RENT AND SALE



AT HOME

- Wheelchair
- Walker
- Electric Bed
- Manual Bed
- Water Mattress
- Cans
- Sticks
- Serum Tripod
- Walking Frame

•Over Bed Table
•All Kinds Of Oxygen We Also Provide
•Laboratory service.
•Physiotherapist
•Nurses Aids
•P.T.S. (AMBULANCE)

HOME MEDICAL EQUIPMENT SERVICES

ՅՈՒՑԱՍՐԱՐ՝ «ԱՐԻՆ» ՍԵՆՁԸՐ ԳՐԱՍԵՆՆԱԿ՝ ԱՅԿԻԼ, ԱՅԵՏԻ ՇԵՆՔ, Բ. ՅԱՐԿ ԸՆՈ. (021) 242556/7

NO MATTER WHAT YOU NEED... ... OR WHERE YOU NEED.



«ԱԶԳԱԿ»-Ի ՄԵՁ ԾԱՆՈՒՅՈՒՄԻ ՀԱՍԱՐ

Բոլոր անոթ, որոնք կը փափաքին «Ազգակ»-ի մեջ որեւէ ծանուցում հրատարակել, պէտք է բնագիրը խմբագրատուն՝ ծանուցումներու բաժանմունք հասցեն հրատարակման թուականէն առնուազն օր մը առաջ, Մինչեւ ԵՐԵՎԱՆԻ ԺԱՄԸ 5:00: ՄԱՀԱԶԳԻՆԵՐԸ բացառութիւն են: Մահագոյ կ'ընդունուի մինչեւ ուշ գիշեր, այնքան ատեն որ գայն հրատարակելու հնարատրութիւն կայ:

ԽԱՉԲԱՌ-ԹԻՒ 5604 Պատրաստեց՝ Տ.Ս. ԱՐԱՋԱՐԵԱՆ

1 2 3 4 5 6 7 8 9 10 11

1											
2											
3											
4											
5											
6											
7											
8											
9											
10											
11											

ՇՈՐԻՉՈՆԱԿԱՆ	ՈՒՂԱՆԱՅԵԱՑ
1. Գծաթիւց:	1. Ակնկալուծիւն - Արաբական երկիր:
2. Դափնեվարդ - Ան-Հատ:	2. Սրունքի մեծ ոսկորը - Նոյն թաղի բնակիչ:
3. Ո՛ւր - Երկաթաբեր տապար (Հակ.): - Լեւոն Շանթի երկերէն՝ «... Մարդը»:	3. Այբուբենէն - Լեւոն շուք մասը - Շաղ (Հակ.):
4. Կրօնաւորի տարազ - Փայտի թռչուն:	4. Բուժում կամ խնամք:
5. Որո՞ւ - Յաւի ճիւղ - Նոյն գիրերը:	5. Պատշաճ - Ասպ (Հակ.):
6. Արեւմտեան ռազմական ուժեր - Արական անուն:	6. Գլխանոց - Մարդեան քաղաք:
7. Կուր - Հեղուկի չափ:	7. Որտորդ:
8. Հանքային Համեմ - Յաւելու՞մ - Յուցական անուն:	8. Նախանձիլ - Լարա-լոր նուագարան:
9. Անձկամիտ - Իգական անուն:	9. Այնուամենայնիւ - Ատրեստանի պատմական մայրաքաղաքը:
10. Այբուբենէն - Բաղրեւանդ գաւառի գիւղերէն:	10. Յուցական անուն - Հսկայ:
11. Ազահ (Հակ.) - Ինքնապաշտպանութեան միջոց:	11. Պետրոս Գուրեանի ծննդավայրը - Խօսք:

ԹԻՒ 5603

ԽԱՉԲԱՌԻՆ

ԼՈՒԾՈՒՄԸ

1	Շ	Վ	Օ	Ք	Ա	Կ	Ա	Լ	Բ	Ք	
2	Լ	Ո	Ր	Ա	Մ	Ա	Ր	Գ	Գ	Լ	Ա
3	Ա	Ղ	Օ	Տ	Մ	Ր	Ա	Փ	Ն		
4	Ն	Ո	Ր	Ե	Ր	Մ	Ր	Ե	Ս	Ա	
5	Փ	Ք	Ր	Ա	Լ	Ա	Ր	Ե	Ս	Ա	
6	Ն	Ո	Ր	Ա	Յ	Ր	Կ	Ե	Ղ		
7	Կ	Յ	Ա	Կ	Ա	Կ	Ջ	Ա	Ս		
8	Ա	Ս	Ն	Շ	Վ	ՈՍ	Ա	Ն	Ի		
9	Տ	Օ	Ն	Պ	Ա	Ս	Ա	Կ	Ր		
10	Ն	Ա	Ա	Ն	Ա	Գ	Ք	Ա			
11	Ա	Ս	Պ	Ա	Ր	Կ	Ր	Ս	Ո	Ն	

bezdig_mezdig@hotmail.com



ԱԶԳԱԿ

ՍԱԿԱՐԱՆ

Պէյրութի սակարանին մէջ օտար դրամանշնջերու փակման սակագիները հետեւեալներն էին երէկ.

Սուրիական թղթուկի	28,75 - 29,00 լ.ո.
Քուէյթեան տինար	5110,00 - 5135,00 լ.ո.
Յորդանանեան տինար	2121,00 - 2131,00 լ.ո.
Պահրէյնեան տինար	3985,00 - 4010,00 լ.ո.
Ա.Մ.Էմիրութեան տինար	410,75 - 412,75 լ.ո.
Քաթարեան ոհալ	413,75 - 415,75 լ.ո.
Սեուտական ոհալ	402,00 - 404,00 լ.ո.
Օմանեան ոհալ	3895,00 - 3920,00 լ.ո.
Եգիպտական կինէ	220,00 - 230,00 լ.ո.
Լնգրիական սթերլին	2592,00 - 2602,00 լ.ո.
Չուիցերիական ֆրանք	1156,00 - 1161,00 լ.ո.
Թրքական լիրա	102,50 - 103,00 լ.ո.
Կիպրական փաուստ	3075,00 - 3100,00 լ.ո.
Ճափոնական հապար եէն	13,65 - 13,75 լ.ո.
Ամերիկեան տոլար	1501,00 - 1515,00 լ.ո.
Քանադական տոլար	1150,00 - 1155,00 լ.ո.
Աւստրալիական տոլար	1093,00 - 1098,00 լ.ո.
Եւրօ	1800,00 - 1810,00 լ.ո.

• ՈՍԿԻ

Անգլիական մէկ ոսկի	154,000 - 159,000 լ.ո.
Իրանեան մէկ ոսկի	139,500 - 144,500 լ.ո.
Օսմանեան մէկ ոսկի	129,000 - 134,000 լ.ո.
Մեքսիքական փէսոս	740,000 - 750,000 լ.ո.
Մէկ թիլոկում ձոյլ ոսկի	19,325,000 - 19,525,000 լ.ո.
Մէկ օսն ոսկի	401,50 - 402,00 Տ
Մէկ օսն արծաթ	5,46 - 5,48 Տ

• Ամերիկեան տոլարի փոխանակման սակերը.

Եւրօ	1.1945 - 1.1950
Քանադական տոլար	1.3070 - 1.3080
Չուիցերիական ֆրանք	1.3024 - 1.3029
Ճափոնական եէն	109.34 - 109.39
Մէկ սթերլին	1.7192 - 1.7197

Մէկ տոլար 565 դրամ

• ՍՈՒԼԻՏԵՐԻ ԲԱԺՆԵԹՈՒՂԹԵՐ ԳԻՆԻ Ա. ճշդում ԳԻՆԻ Բ. ճշդում

Ա. կարգ -
Բ. կարգ

ԼՈՒՍԱՅԱՓՈՒ ԱԼԵՔՍԱՆԵԱՆ ՀԵՌ. 01-252852

☆ Ի՞նչ կ'ըսեն ԱՍՏՂԵՐԸ ☆

ԽՈՅ (21 Մարտէն 20 Ապրիլ)

Ձեր ծրագիրները պիտի իրագործուին ձեր որոշած բուականէն առաջ: Պիտի կարեւոր գաղտնի իրականացնել ձեր նախատեսածէն շատ արագ:

ՅՈՒԼ (21 Ապրիլէն 21 Մայիս)

Եթէ չէք ուզեր ռեւէ մէկը տեսնել, դուք ձեզի մի պարտադրեք հանդիպիլ մարդոց: Բայց այս տրամադրութիւնը հասկցուցէք ուրիշներուն բարեկիրք ձեռով, կամ՝ դիւանագիտութեամբ: Եղբ սիրալիր ամե՛նուն հետ:

ԵՐԿՈՒՈՐԵԱԿ (22 Մայիսէն 21 Յունիս)

Տօնական օրերը կը մօտենան, եւ դուք կը մտածէք ռանձին ապրող մարդոց մասին: Կը մտածէք դիմել ընկերութեան մը, որ պիտի օգնէ ձեզի անցընելու այս դժուար պահերը:

ԽՆՅԳԵՏԻՆ (22 Յունիսէն 23 Յուլիս)

Եթէ անգործ էք, քիչ մը եւս սպասեցէք, որպէսզի կարենաք գործ մը ճարել: Հիմա հարկ է գործի անցնիք: Օրը յարմար է բանակցութեան: Օրը յաջող է:

ԱՌԻԻԾ (24 Յուլիսէն 23 Օգոստոս)

Արտասահմանի մէջ պարող զազական մը նկատակ ունի ամառու վերջը գալու ձեր մօտ: Ուրիշ ոչինչ ձեզ կրնայ հանդուցնել բացի անոր գալուստէն:

ԿՈՅԱ (24 Օգոստոսէն 23 Սեպտեմբեր)

Վստահ չէք, որ ձեր մտածած հարցերը իրականանան: Այս կասկածը լաւ արդիւնք պիտի տայ ձեր կեանքին համար: Հետեւեցէք ձեր նախագաղտնաբերուն:

ԿՇԻՈՒՔ (24 Սեպտեմբերէն 23 Հոկտեմբեր)

Ձեք կրնար խօսիլ ձեր գաւակներուն հետ միեւնոյն լեզուով: Ասիկա քերականութեան խնդիր չէ, այլ յարաբերութեան պակասը՝ մեծի եւ փոքրի միջեւ:

ԿԱՐԻՃ (24 Հոկտեմբերէն 23 Նոյեմբեր)

Երբեք չէք կրնար ձերբազատիլ ձեր հին յուշերէն: Շատ մը հարցերու կեցումը ձեր գոյքը կարեւորէն: Ապրեցէք օրը օրին, կեանքին բերած կշռոյթով:

ԱՂԵՂՆԱԻՈՐ (24 Նոյեմբերէն 21 Դեկտեմբեր)

Անձ մը ձեզի կը նայի սիրոյ աչքերով, բայց չի համարձակիր առաջին քայլը առնելու: Ձեզի կը մնայ ընդառաջ երբայ անոր եւ զիրար ճանչնալ լաւ ձեռով:

ԱՅԾԵՂՉԻՐ (22 Դեկտեմբերէն 20 Յունուար)

Ուսանողները պիտի ունենան դժուարութիւններ՝ իրենց աշխատանքը շարունակելու յարատեւօրէն: Մինչդեռ յարատեւ ջանքերով պիտի կարենան յաջողիլ: Ուրեմն շարունակեցէք ձեր ճիգերը:

ԾՈՎԱՆՈՅՑ (21 Յունուարէն 19 Փետրուար)

Սպասէ լաւ անակցելիլ մը, իսկ աւելի լաւ է ոչինչ ակնկալել, որպէսզի հաճելի անակցակներ ցերեկայանան ինքնաբերաբար: Օրը կը պահանջէ խոհեմութիւն:

ՉՈՒԿ (20 Փետրուարէն 20 Մարտ)

Գողութեան կամ՝ դրամական կորուստի հարց մը կրնաք ունենալ. հետեւաբար լաւ պահեցէք ձեր դրամական կը, ձեր ունեցածը: Օրը կը պահանջէ ըլլալ արթուն:

ՕՐԱՏԵՏՐ

ՀԱՄԱԵՍՐՈՒՄ / ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ / ԵՐԳ

ՍՊԱՆԱԿԱՆ ՀԻՆ ՓՈՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ



Սպանիական մշակութային «Սերվանդէս» հիմնարկը իր յարկին տակ կը հիւրընկալէ հետաքրքրական ցուցահանդէս մը, որ Լիբանան կը բերէ սպանական տպագրական արուեստի հին եւ արժէքաւոր գործեր: «Կրպատոս» խորագիրը կրող այս ցուցահանդէսը տեղի կ'ունենայ շնորհիւ անհատական արժէքաւոր հաւաքածոյի մը տիրոջ՝ անախատեանութեան:

Յուցահանդէսը կ'ընդգրկէ 18րդ դարու վերջաւորութեան մինչեւ 1890 թուական երկարող ժամանակաշրջանին պատկանող տպագրական փոքրագրութեան (կրավիւր) արուեստի գործերու օրինակներ, որոնք բնականաբար կը բաղկանան մեծ մասամբ նկարներէ: Սակայն ցուցահանդէսին մէջ տեղ գտած են նաեւ հին տպագրութիւններու փոքրագրութեան բնագիրներ: Նշենք, որ ցուցադրութեան պատկանող գործերը իսկական օրինակներ են, եւ ոչ՝ ընդօրինակութիւններ:

Յուցադրութեան փոքրագրութիւնները հիմնականին մէջ կ'արտացոյցեն տունայլ ժամանակաշրջանի սպանական ընկերութիւններուն դիմագիծը, ընկալուած կարգերն ու բարբերը՝ անոնց մատուցած իրապաշտ

ձեռնարկները բաժնիներուն տեղեկութիւնները, որոնք յաճախ կը նկարագրեն Սպանիոյ եւ Եւրոպայի տարածքին պատահած դէպքեր:

Ներկայիս արխիւային, պատմական եւ վաւերագրական արժէք ներկայացնող այս փոքրագրութիւններուն ցուցադրութիւնը կը շարունակուի մինչեւ 10 Դեկտեմբեր: Չայն կատիլի է այցելել կեսօրուան ժամը 12:00էն մինչեւ իրիկուան ժամը 20:00:

ԱՅՍՕՐ

- Նուագահանդէս՝ սենեկային երաժշտութիւն, ժամը 20:00ին, Սէն Ժոզեֆ համալսարանի «Փ. Ապու Խաթեր» սրահ:

- Երաժշտական երեկոյ՝ «Օփերա սը սուար», ժամը 20:00ին, Գերմանական Մշակութային Կեդրոն:

- Եւրոպական Շարժապատկերի փառատօն՝ շարժապատկերի «Սոֆի» սրահ, մինչեւ 7 Դեկտեմբեր:

- Տօնավաճառ՝ «Սուր էլ Պարզութեան», «Պիլ», մինչեւ 7 Դեկտեմբեր:


- Նկարչական ցուցահանդէս՝ «Տը լա փեթիւր... Սեմիլըման», Սամիր Թապէթի գործերը, «Ալիս Մոդապոլա» ցուցասրահ, մինչեւ 24 Դեկտեմբեր:

- Լուսանկարչական ցուցահանդէս՝ «Լա Ռեշերշ տը լ'օմ օ սապլ», Անճելիքա Շրեօտըրի գործերը, «Կեօթ» հիմնարկ, մինչեւ 19 Դեկտեմբեր:

- Լուսանկարչական ցուցահանդէս՝ «Հիսթորա ա տորմի տեպու», Ֆուլիո Քոտաիի գործերը, «Էսփաս Էս. Տէ.» ցուցասրահ, մինչեւ 13 Դեկտեմբեր:

- Թատրոն՝ «Գամալա արտ, քաղաքի միջ... ֆաուր», ժամը 20:30ին, «Գալիսօ տիւ Լիպան», մինչեւ 29 Փետրուար:

ՕՐԵՆԵՒՅՐ



ՉՈՐԵՔՇԱՐԹԻ, 3 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2003

ՊԵՅՐՈՒԹ ՄԱՍԱՐ ԱՍՊՈՏ

ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆ ՑԵՐԵԿ՝ 30°C

ԳԻՇԵՐ՝ 23°C

ԽՈՆԱՌՈՒԹԻՒՆ՝ 65%

ԱԶԳԱԿ **50 ՏՆՆԻ ԸՆՈՒՄ**

ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ 3 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1953

ԳԵՐՄԱՆ ՔՆՆԱԴԱՏՆԵՐԸ ՈՒՒԼԻԸՄ ՍԱՐՈՅԵԱՆԻ ՄԱՍԻՆ

Աւստրիոյ եւ հարաւ արեւմտեան Գերմանիոյ մէջ շատ կարողացուած հեղինակաւոր գրական թերթ մը «Ջալցապուրկը Նախրիլթէն» ժ. եւ Լ. սկզբնատաներով գրախօսական մը նուիրած է, մեծ մասամբ յատկացած՝ Ուիլիմ Սարոյեանի:

Սարոյեանի գործերէն տարբերատոր ցարդ գերմաներէնի յարգմանը եւ յոյս տեսած է ամէնէն ծանօթ հրատարակչական ընկերութեանց կողմէ: Քանակի տեսակետով, ոչ մէկ հայ հեղինակ այսքան պատիւ եւ յաջողութիւն գտած է: «Ռեքլամ» ծանօթ տունը միայն փորձածաւալ մէկ երկու հատորիկներ հրատարակած է, քաղուած՝ հայ պատմիչներէ:

Գերման բնագաղտը, յիշելի ետք Ամերիկայի մէջ Սարոյեանի գտած յաջողութիւնները եւ ամերիկացի բնագաղտներու կարծիքները, իր վերլուծումը կը փակէ հետեւեալ բառերով:

«Թրվոլու ռնով պատմող, հզօր ձիրք կերպարներ կերտելու, ազատ ոնով, իր անձնական պարտմներու պրիսմակին ցոլորով՝ ամերիկեան կենցաղին գաղտնիքները յայտնագործող, բազմակերպ կարողութիւններով կը ջանայ երգիծական ոնով հաշտեցնել կեանքի գողտրիկ փափկութիւնը եւ անարգ բրտութիւնը»:



ԱՅՍՕՐ՝ 3 ԴԵԿՏԵՄԲԵՐԻՆ

■1903- Մահ հմուտ հայագետ, գրաբանագետ եւ կրթական մշակ Մատաթիա Գարագաշեանի:

Մ Ա Ր Զ Ա Կ Ա Ն



ԱՇԽԱՐՀ



ԼԻԲԱՆԱՆԻ ՖՈՒԹՊՈՒԼԻ ԱՌՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ ԹԱՏԱՄՈՆ ՍՈՒՐ - Հ. Մ. Ը. Մ. 2-1

Լիբանանի ֆուտբոլի ախոյեանութեան 4րդ հանգրուանին, երէկ, Հ. Մ. Ը. Մ. Ֆուտբոլի ներկայացուցչական խումբը 2-1 արդիւնքով պարտութիւն մը կրեց Թատամոն Սուրին, այս վերջինին դաշտին վրայ:

Ա. կիսախաղին սկիզբը, Հ. Մ. Ը. Մ. ստեղծեց կոլ նշանակելու ստոյգ առիթ մը, սակայն Դոր Բէհէյեան չյաջողեցաւ ցնցել հարաւի կազմին բերդը: Մրցումը ընդհանրապէս եղաւ հաւասարակշռուած:

Բ. կիսախաղին սկիզբը, Թատամոն Սուր բացաւ մրցումին հաշիւը: Սակայն հինգ վայրկեան ետք Յակոբիկ Տոնապետեան նշանակեց Հ. Մ. Ը. Մ. Ֆուտբոլի հաւասարութեան կոլը, որմէ վեց վայրկեան ետք, Թատամոն Սուր նշանակեց կոլ մը եւս:

Մրցումին վերջին տասը վայրկեաններուն, Հ. Մ. Ը. Մ. ճնշեց Թատամոն Սուրի բերդին վրայ, սակայն չկրցաւ հաւասարութեան կոլը նշանակել, իսկ Թատամոն Սուրի բերդին սիւնը արգելք հանդիսացաւ, որ Լեւոն Խաչատուրեանի զխու հարուածը հասնի իր նպատակին:

Հ. Մ. Ը. Մ. Ֆուտբոլի մրցակիցը պիտի ըլլայ Անսար: Մրցումը տեղի պիտի ունենայ Երաթթ, 6 Դեկտեմբերին, Պէյրութի Քաղաքապետարանի դաշտին վրայ, երեկոյեան ժամը 8:30ին:

Երէկ տեղի ունեցան նաեւ 2 այլ մրցումներ, որոնց ընթացքին Հ. Մ. Մ. 1-0 արդիւնքով պարտութեան մատնեց Անսարը: Նոյն արդիւնքով վերջ գտաւ նաեւ Ահտ - Երաթթ Մասէլ մրցումը ի նպաստ առաջինին:

Քրդ հանգրուանի մնացեալ 3 մրցումները տեղի կ'ունենան այսօր՝ հետեւեալ յայտագրին հիմամբ.

Սաֆա - Սալամ	Ժամ	Դաշտ
Օլիմպիք - Մապարա	2:15	Պ. Համուտ
Նըթմէ - Սաթէս	6:00	Պէյրութ
	8:30	Մ. Աւան

ԷՆ. ՊԻ. ԷՅ.

ՓԻՍԹՆԶԻ 13ՐԴ ՅԱՂԹԱՆԱԿԸ

էն. Պի. էյ. ի երէկուան մրցումներուն, Տիթրոյիթ Փիսթնիզ արձանագրեց եղանակի իր 13րդ յաղթանակը, երբ յաղթական վերադարձաւ Նիւ Եորքէն, ուր յետ երկարաձգման ընթացքին 79-78 արդիւնքով պարտութեան մատնեց դաշտին տէրը՝ Նիքսը: Փիսթնիզի արձանագրած առաջին յաղթանակին մէջ իր բաժինը ունեցաւ Ծոնսի Պիլիպս, որ նշանակեց 24 կէտ (եօթ կէտը՝ երկարաձգման ընթացքին): Նշեմք, ի՞նչ Նիքս այսպիսով կրեց եղանակի իր 11րդ պարտութիւնը:

Լոս Անճելեսի մէջ, Քիլիփըզ յաջողեցաւ արձանագրել եղանակի իր հինգերորդ յաղթանակը 91-83 արդիւնքով պարտութեան մատնելով Սան Անթոնիո Սփրիթը, որ այսպիսով կրեց իր 9րդ պարտութիւնը, իր արձանագրած 9 յաղթանակներուն զուգահեռ: Հակառակ անոր որ Մալիք Ռոզ նշանակեց 26 կէտ եւ 11 ռիպաունտ, սակայն այդ մէկը բաւարար չեղաւ, որ անոր կազմը տանի վերջնական յաղթանակը:

Պարտութիւն կրողներու շարքին եղաւ Սելիթըս, որ Պոսթընի մէջ տեղի տուաւ Մեմֆիս Կրիզլիզի դիմաց 96-89 արդիւնքով: Սելիթըսի մարզիկ՝ Փոլ Փիլսոն նշանակեց մրցումին ամէնէն աւելի շատ կէտերը (26 կէտ), մինչ անոր խմբակից Մայք Միլըր նշանակեց 10 կէտ, 10 էսիսթ եւ 8 ռիպաունտ: Նշեմք, որ Սելիթըս այսպիսով կրեց եղանակի իր 10րդ պարտութիւնը. անիկա ցարդ արձանագրած է եօթ յաղթանակ:

Ճէօնիքսի մէջ, Սանդ 89-82 արդիւնքով պարտութիւն մը կրեց իր հիւրերն՝ Ինտիանա Փէյսըրզէն: Յաղթական կազմին մարզիկներէն՝ Փերմէն Օնիլ իր կարեւոր դերը ունեցաւ, երբ նշանակեց 32 կէտ եւ 14 ռիպաունտ, մինչ անոր խմբակից Ալ Էրիսկիթը նշանակեց 18 կէտ, 7 էսիսթ եւ 6 ռիպաունտ:

Շիքագօ Պուլզ յաջողեցաւ եղանակի իր հինգերորդ յաղթանակը արձանագրել, իր դաշտին մէջ 97-87 արդիւնքով պարտութեան մատնելով Միլուոքի Պաքսը: Պուլզի մարզիկ Ժամալ Քրոֆօրտ նշանակեց 30 կէտ, որուն շնորհիւ, խումբին մարզիչ Սթեֆ Սթալզ արձանագրեց իր առաջին յաղթանակը՝ Պուլզի հետ:

Վերջապէս, վեցերորդ եւ վերջին մրցումին Եութա ձէզ 91-84 արդիւնքով պարտութեան մատնեց Նիւ Ճըրզի Նէյթը: ձէզի մարզիկներէն Անտոնի Քիլիքսը նշանակեց 18 կէտ եւ 10 ռիպաունտ, մինչ Նէյթի մարզիկներէն Ռիչըրտ ձէֆըրսը՝ 22 կէտ:

Հ.Մ.Ը.Մ.Ի ՖՈՒԹՊՈՒԼԻ ՄԻՋՄԱՍՆԱՃԻԴԱՅԻՆ ՄՐՑԱՇԱՐՔԸ ԱԲԱՐՏԵՑԱԲ ՍԵՑ ՅԱՋՈՂՈՒԹԵԱՄԲ

Անցեալ Կիրակի օր Պուրճ Համուտի Քաղաքապետարանի դաշտին վրայ վերջ գտաւ Հ.Մ.Ը.Մ. Ֆուտբոլի միջմասնաճիւղային մրցաշարքը, որուն իրենց մասնակցութիւնը բերին ութ կրտսերներու եւ ութ երէցներու խումբեր:



Պատուոյ թրիպիւնէն մաս մը

Ողջունելի երեւոյթ մըն էր Երջանային ֆուտբոլի յանձնախումբին այս նախաձեռնութիւնը, որ պսակուեցաւ յաջողութեամբ, որովհետեւ երկար ժամանակէ ի վեր Հ.Մ.Ը.Մ. Ֆուտբոլի միջմասնաճիւղային մրցաշարքը ստացաւ Երջանային վարչութեան ատենապետ Յակոբ Քէչիչեան:

Կրտսերներու մրցաշարքը ստացաւ Երջանային վարչութեան ատենապետ Յակոբ Քէչիչեանէն, իսկ փոխ ախոյեան հանդիսացած խումբը՝ Վահէ Մինասեանէն:

Հ.Մ.Ը.Մ. Ֆուտբոլի միջմասնաճիւղային մրցաշարքը ստացաւ Երջանային վարչութեան ատենապետ Յակոբ Քէչիչեանէն:

Կրտսերներու մրցաշարքը ստացաւ Երջանային վարչութեան ատենապետ Յակոբ Քէչիչեանէն:

Կրտսերներու մրցաշարքը ստացաւ Երջանային վարչութեան ատենապետ Յակոբ Քէչիչեանէն:



Երէցներու ախոյեան հանդիսացած Սերոբ Աղբիւրի մարզիկները

ղային ֆուտբոլի մրցաշարք տեղի էր ունենար: Մրցաշարքին իրենց մասնակցութիւնը բերած խումբերէն բացի մեծ խանդավառութիւն ստեղծուեցաւ նաեւ Հ.Մ.Ը.Մ. Ֆուտբոլի միջմասնաճիւղային մրցաշարքին ախոյեան հանդիսացած խումբին բաժակը յանձնեց Յարութ Մարկարոսեան, իսկ փոխ ախոյեանը՝ Կրտսերներու մրցաշարքին ախոյեան հանդիսացած խումբին Երջանային վարչութեան ատենապետ Յակոբ Քէչիչեան:

Կրտսերներու մրցաշարքը ստացաւ Երջանային վարչութեան ատենապետ Յակոբ Քէչիչեանէն:



Կրտսերներու ախոյեան հանդիսացած Երկայացուցչականի կազմը

Կրտսերներու մրցաշարքը ստացաւ Երջանային վարչութեան ատենապետ Յակոբ Քէչիչեանէն:

ՀԱՅ ԱՌԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՔՈՒԷՃ ՏԻԿԱՆՑ ՕԺԱՆԴԱԿ ՄԱՐՄԻՆ ՆԱԽԱՃԱՇ - ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՄԱՆՈՐԻ ՊԱՋԱՐ

ՆԻՐՔ՝ «ԱՌՈՂՋ ԱՊՐԵԼԱԿԵՐՊ»
Կը դասախօսէ
ՏԻԿԻՆ ՄԱՐԱԼ ՏԵՅԻՐՄԵՆՃԵԱՆ
(Պալամանտ Դամալարանի դասախօսուի)

● Գեղարուեստական յայտագիր աշակերտներու կողմէ.
Տեղի կ'ունենայ Ուրբաթ, 5 Դեկտեմբեր 2003, կէսօրէ առաջ ժամը 10:00ին, Էայ Աւետ. Ա. Եկեղեցոյ համադասարանին մէջ:

ՊԱՍԲԵԹՊՈՒԼ ԱՅՍՕՐ՝ Հ.Մ.Ը.Մ. - ՍԱՏԱՔԱ

Լիբանանի պասթիֆուտբոլի տղոց Բ- դասակարգի ախոյեանութեան, այսօր տեղի կ'ունենան 2րդ հանգրուանի մրցումները:

Հ.Մ.Ը.Մ. Ֆուտբոլի տղոց ներկայացուցչական խումբը, «Աղբալեան - Հ.Մ.Ը.Մ.» Մարզամշակութային համալիրի «Թնճուկեան» դաշտին վրայ, երեկոյեան ժամը 22:00ին կը ճակատի Սատաքայի դէմ:

Իրենց առաջին մրցումին, 69 - 61 արդիւնքով պարտութիւն մը կրած Հ.Մ.Ը.Մ. տղաքը ոչ մէկ ճիգ պէտք է խնայեն՝ արձանագրելու եղանակի առաջին յաղթանակը:

«ՉԵՄՓԻԸՆԶԼԻԿ» ԿԱԼԱԹԱՍԱՐԱՅ - ԵՌՎԵՆԹՈՒՍ՝ 2 - 0

Անցեալ Նոյեմբեր 25ին յետաձգուած Կալաթասարայ - Եուվենթուս «Չէմփիլընզ Լիկ» մրցումը, որ տեղի ունեցաւ Երէկ Տորթմուտի մէջ (Գերմանիա), վերջ գտաւ Եուվենթուսի պարտութեամբ՝ 2 - 0:

Եուվենթուսի հետ Բ. հանգրուան հասնող 2րդ խումբը պիտի յատկանայ Ռէյալ Սոսիեթատ - Կալաթասարայ մրցումէն ետք: Սպանական կազմը հաւասարութեան մը պէտք ունի ապահովելու համար իր տոմարը: Ստորեւ՝ Դ. խմբակին դասաւորումը.

	Յ.	Հ.	Պ.	ՆՇ.	ՍՏ.	ԿԷՏ
1. Եուվենթուս	3	1	1	8	6	10
2. Ռէյալ Սոսիեթատ	2	2	1	7	7	8
3. Կալաթասարայ	2	0	3	5	7	6
4. Օլիմպիարսու	1	1	3	6	6	4

Ա. ՍԷ. ՄԻԼԱՆ «ԱԶԱՏ ԱՐՁԱԿԵՅ» ՌԻՎԱԼՏՈՆ

Ա. ՍԷ. ՄԻԼԱՆԻ պատասխանատուները վերջապէս յայտարարեցին, թէ իրենց ակումբին մաս կապող պրապիցի մարպիկ՝ Ռիվալտո կրնայ իր կապը վերջնականապէս լքելու պահանջներու փոխանցման սակարանք վերաբացուի յառաջիկայ Յունուարին:



Ռիվալտո

Հակառակ անոր որ Ռիվալտոյի պայմանագրու թեւաւոր տարածման մնացած է 18 ամիս, սակայն անոնք երկուքը իրարու հետ վերջապէս համաձայնութիւն մը կ'ընելով որոշեցին «ամուսնալուծուիլ»:

Անցեալ եղանակին, Ա. ՍԷ. ՄԻԼԱՆԻ հետ երեք բաժակ շահած «Չէմփիլընզ Լիկ», Իտալիոյ բաժակ եւ Եւրոպայի գերբաժակ, Ռիվալտոյի այս եղանակին արձանագրած արդիւնքները այդքան ալ գոհ չձգեցին անոր ակումբը, որ իր այդ յայտարարութիւնը կատարելէ բացի, անոր յաջողութիւն մաղթեց ֆուտբոլիստի իր ասպարէզին մէջ:

Եւստի անգլիական ակումբներ, որոնց կարգին՝ Լիվըրպոլ, Թորքենհամ եւ Չելսի արդէն իսկ շատ մօտէն հետաքրքրուած են պրապիցիով եւ այժմ լուրջ աշխատանքի լծուած են իրենց կապմին միացնելու համար 31 տարեկան յառաջապահը:

«ԴԵՄ ԱՌ ԴԵՄ»
Հարցազրոյցներու շարք

«ԱԶԳԱԿ»Ի ՀԱՐՑԱԶ ՐՈՅՅՈՒՆ
ՍԵՐԺ ԹԱՆԳԵԱՆԻ ՀԵՏ

«ԱԶԳԱԿ»Ի Հինգշաբթի, 4 Դեկտեմբերի թիւով կարդալ մեր շահեկան հարցազրոյցը հոշակաւոր «Սիսթըմ Աֆ Է՝ Տաուն» ոտը խումբի անդամ Սերժ Թանգեանի հետ:



galerie
PIERROT
Specialiste de Meubles D'enfants de 0 à 20 ans

galerie
PIERROT
Liste de Naissance et de Bâpieme
Autostade Jal-el-Dib - Tel : 04 / 713233 - 03 / 701607

